ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

«ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 30 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023 - 2028 թթ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
2. ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 5
3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 6
4. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ 7
5. ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ /ԱՆՁՆԱԳԻՐԸ/ 11
6. ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ 12
7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 20
8. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ 22
9. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ 23
10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 23
11. ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 24
12. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ 25
13. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 31
14. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ 33
15. ՏՀՏ և ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 35
16. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ 37
17. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ 40
18. ԱՇԽԱՏԱԿԶՄ 42
19. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ 44
20. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 46
21. ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 49
22. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ 51
23. ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ 52
24. ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ 52
25. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ 53
26. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ 54
27. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 55
28. ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 57
29. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ 62
30. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ 63
31. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 71
32. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 74

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններն աննախադեպ արագ ու դինամիկ են ընթանում: Նման փոփոխությունների առանձնահատկություններից մեկն այն է, որ գիտության և տեխնիկայի ընձեռած նոր հնարավորությունները արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի կազմակերպման, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու փոխանցման ոլորտ:

« Գյումրու թիվ30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թթ. զարգացման ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան: Դպրոցի զարգացման ծրագիրը արտացոլում է դպրոցի 5 տարվա տեսլականը:

Զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թթ. դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Գյումրի քաղաքի համայնքի կարիքները:

Ծրագրի նպատակներն ու խնդիրները ձևակերպվել են՝ հիմնվելով հանրակրության պետական չափորոշիչի ձևավորման հիմնական երկու բաղադրիչների վրա.

- Ուսումնական բնագավառների և կրթության բովանդակության բաղադրիչների,
- Շրջանավարտին ներկայացվող որակական պահանջների՝ կարողունակությունների[1]:

Ներկայումս ժամանակի թելադրանքն է վերանայել ուսուցման ավանդական մոտեցումները, ինչը անհրաժեշտ և անխուսափելի է դարձնում հանրակրթության ոլորտում էական բարեփոխումները: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է պետական մտածելակերպ ունեցող և ապագայի մարտահրավերներին դիմակայելուն պատրաստ անհատների ձևավորումը:

Ի հավելումն, ծրագիրը մշակելիս իրականացվել են ներկայացուցչական հարցումներ մանկավարժների, ծնողների և աշակերտների շրջանում, որի արդյունքները ներառվել են ծրագրի ռազմավարության տարբեր հատվածներում:

[1] I «Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորումը», հոդված2

Դպրոցի զարգացման ծրագրի կառուցվածքային սխեման



ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



2.ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպես արդեն նշել ենք, հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը:

ՀՀ-ում հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀՀ համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիությանը, հավասար մասնակցության հնարավորությանը և որակի ապահովմանը:

Հանրկրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպման հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է[2]:

Հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի:

ՀՀ տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:

[2] « Հանրակրթության մասին օրենք », հոդված 4:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:
2. Դպրոցի հիմնադիրը ՀՀ-ն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):
3. Դպրոցը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 30 միջնակարգ դպրոց» հիմնարկի (վկայականի համարը՝ Բ 001620, գրացման համարը՝ 29.0025) իրավահաջորդը:
4. Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):
5. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շչեդրինի 7:
6. Դպրոցը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
7. Դպրոցը կարող է ունենալ ՀՀ զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցները ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:
8. Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները և դպրոցի գործունեությանն առնչվող «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված այլ տեղեկություններ:
9. Դպրոցի անվանումն է՝

• Հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

• Հայերեն կրճատ՝«Գյումրու թիվ 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

• Ռուսերեն լրիվ՝ «Гюмрийская основная школа № 30» государственная некоммерческая организация Ширакской области республики Армения.

• Ռուսերեն կրճատ՝ «Гюмрийская основная школа № 30» ГНО.

• Անգլերեն լրիվ՝ «Gyumri № 30 basic school» State Non Profit Organization Shirak rergion Republic of Armenia.

• Անգլերեն կրճատ՝ «Gyumri № 30 basic school» SNPO:

4.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ունենալ նորարար դպրոց

Շարունակաբար նորացող, զարգացող ու փոփոխվող գիտելիքները և դրանց ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործականությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ թե անհատական, թե ներպետական և թե համաշխարհային մակարդակներում: Գերարագ զարգացող աշխարհում գիտելիքը լոկալ բնույթ չի կրում: Ցանցերի ու հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի ցանկացած ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի բոլոր անկյուններում:

Նման պայմաններում առավել արդյունավետ ու հաջողակ են այն անհատները, խմբերը, պետությունները, որոնք կարողանում են կիրառել նորագույն գործիքների ավելի լայն տեսականի և բաց են շարունակ տեղի ունեցող փոփոխությունների առաջ:

Նորարար դպրոցը պահանջում է.

- Տեղեկատվական հաղարդակցության տեխնոլոգիաների ՏՀՏ –ի կիրառումը որպես ուսումնառության անբաժանելի մաս:
- Սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակների ձևավորում:
- Օտար լեզուների խորացված ուսուցում:
- Կրթության մեջ ուսուցման պրակտիկ ուղղվածության առաջնահերթություն, որը հնարավորության կտա սովորողին կիրառել ձեռք բերված գիտելիքները :
- Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոց:
- Ապահովել սովորողների իրազեկվածությունը արտակարգ իրավիճակներում ճիշտ վարքագիծ դրսևորելու նպատակով:
- Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:
- Ստեղծել պայմաններ՝ ուսումնահետազոտական գործունեություն ծավալելու:
- Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, որն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքում, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ:
- Երաշխավորել սովորողների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոց:
- Հաշվի առնել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական առանձնահատկությունները:

Այսպիսով՝ դպրոցի առաքելությունն է բավարարել սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները: Իսկ կրթության գերխնդիրն է բարձրացնել համակարգի կրթական մակարդակը՝ ապահովելով շարունակականություն, մատչելիություն, հաջորդականություն սովորողների զարգացման մակարդակին համապատասխան:

4.1. Ի՞նչ կրթական կարիքներ է այն բավարարելու

Առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների և ուսուցման արդյունավետ կազմակերպման միջոցով ապահովել

- Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներն ու կարողունակությունները,
- Ուսուցման մեթոդների և ձևերի բազմազանություն,
- Կրթության կազմակերպման բազմազանություն,
- Աշխարհաքաղաքական մարտահրավերներին պատրաստ,
- Համաշխարհային շուկայում կողմնորշվող և մրցունակ,
- Մարդասիրական ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

4.2. Կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները.

Կրթական քաղաքականության միտումների համապատասխանեցում .

- հոգևոր, մտավոր, ֆիզիկական և սոցիալական զարգացում,
- մարդկային արժանապատվության պահպանմանում,
- աշակերտի հասարակական հարմարեցում՝ իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերման և ինքնուրույն կյանքի ն նախապատրաստում,
- մասնագիտական կողմնորոշում,
- ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովում,
- ձևավորում՝ որպես ապագա քաղաքացի:

Շահառու խմբերի կարիքներն են՝

- ըստ կրթական աստիճանների ձեռք բերել հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված վերջնարդյունքներ ու կարողունակություններ:

Վերոնշյալ համատեքստում դպրոցի առաքելությունն է բավարարել սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները, մասնավորապես՝

1. Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար:
2. Սովորողի կրթական կարիքի գնահատում և բավարարում՝ տարբերակված ուսուցմամբ:
3. Սովորողի կրթական կարիքի բավարարում՝ տարբերակված ուսուցմամբ:
4. Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտի ստեղծում դպրոցի և ծնողական համայնքի միջև:
5. Կրթության կազմակերպում՝ «բոլորի համար» սկզբունքով:
6. Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ավանդույթներով հարուստ, բազմամյա պատմության վրա հիմնվելով, ինչպես նաև հետաքրքրություն առաջացնելով նորի, հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

4.3 Հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսներն ու հնարավորությունները.

Հաստատության ենթակառուցվածքների բարելավում

Նյութատեխնիկական բազայի, մասնավորապես՝

- Համակարգչային տեխնիկայի համալրման,
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրման և դասապրոցեսում վերջիններիս լայնորեն կիրառման,
- Ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերման, դպրոցի լաբորատորիաների հարստացման,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿ) սովորողների անվտանգ տեղաշարժը ապահովող շենքային պայմանների ապահովման միջոցով:

Մարդկային ռեսուրսների զարգացում

- Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավման,
- Մանկավարժական համակազմի նոր և փորձառու կադրերով համալրման,
- Մանկավարժների աշխատանքային մոտիվացիան ապահովելու տարատեսակ խրախուսման ձևերի ներդրման միջոցով:

Ֆինանսական ռեսուրսների նպատակային բաշխում և կիրառում

- Լրացուցիչ վճարովի ծառայությունների կազմակերպման,
- Տարածքների վարձակալության կազմակերպման,
- Կառավարման խորհրդի հետ համագործակցության ամրապնդման միջոցով:

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- Հանրակրթության պետական չափորոշիչով առաջնորդվելը,
- Փորձառու մանկավարժական կազմի առկայությունը,
- ՏՀՏ-ի կիրառումը որպես կրթության մաս,
- Մասնակցային և համագործակցային աշխատառճը,
- Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
- Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական միջոցառումների կազմակերպումը՝ սեմինարներ, վերապատրաստումներ, վեբինարներ,
- Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում
- Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),
- Խրախուսման միջոցների կրառումը («Տարվա աշակերտ», «Տարվա ուսուցիչ» և նմանատիպ այլ անվանակարգերով ամենամյա մրցույթների անցկացում, շնորհակալագրերի հանձնում ևն),
- Սովորողների մասնակցությունը օլիմպիադաներին, մրցույթներին:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է 2023-2028 ԹԹ. ՁԵՎԱՎՈՐԵԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՏՉԵԼԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՆՊԱՍՏ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Նպատակի իրագործման ուղիներն են.

1.Ակադեմիական զարգացում

- Ուսումնական ծրագրերի թարմացում, դրանց համապատասխանեցում կրթության ժամանակակից պահանջներին ու չափանիշներին:
- Դասավանդման նորարարական մեթոդների ներդրում, ինչպիսիք են ակտիվ և նախագծային ուսուցումը, տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում:
- Առաջադիմության նորարար գնահատման համակարգի կիրառում:
- Լեզուների ուսուցման կարևորում:
- Այնպիսի հիմնական հմտությունների զարգացում, ինչպիսիք են քննադատական մտածողությունը, հաղորդակցությունը և համագործակցությունը:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների աջակցության ծրագրերի մշակում:
- Երկարօրյա ուսուցում և խմբակների ձևավորում:

2. Ֆիզիկական զարգացում

- Դպրոցական ենթակառուցվածքների վերանորոգում, դասասենյակների արդիականացում, լաբորատորիաների ստեղծում:
- Խթանող և բարենպաստ միջավայրի ստեղծում:

3.Սոցիալ-էմոցիոնալ բարեկեցություն

- Զարգացման ծրագրի իրականացման համար սոցիալական և հուզական հմտությունների ձևավորում, զգացմունքների, կոնֆլիկտային իրավիճակների և հաղորդակցությունների կառավարում:
- Սովորողներին մասնագիտական աջակցության տրամադրում:
- Դպրոցական միջոցառումների և նախագծերի կազմակերպում:
- Դրական մթնոլորտի և սովորողների միջև փոխհամագործակցության ձևավորում:

4. Ուսուցիչների մասնագիտական զարգացում

- Ստեղծել հնարավորություններ մանկավարժների մասնագիտական զարգացման համար, անցկացնել սեմինարներ և վարպետության դասեր:
- Աջակցել ուսուցիչների փորձի փոխանակմանը և փոխադարձ ուսուցմանը:
- Մշակել մեթոդներ՝ ուսուցիչներին ոգեշնչելու:
- Աշխատանքի համար բարոյահոգեբանական հանգիստ, հանդարտ մթնոլորտի ապահովում:
- Ուսուցիչների միջև հնարավոր կոնֆլիկտների կանխարգելմանը և դրանց

առկայության պարագայում հարթմանը ուղղված քայլերի ձեռնարկում:

5.ԴՊՐՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ / Անձնագիրը/

Դպրոցի հիմնական շենքը կառուցվել է 1963թ.: Երկրաշարժից հետո՝ 2000թ.-ին, վերակառուցվել է երկհարկանի ուսումնական մասը, 2007թ. կառուցվել է սպորտային դահլիճը՝ հարակից միջանցքով և ճաշարանը:

Լիցենզիայի համարը-տարրական Սերիա Ա N 0562

հիմնական Սերիա Ա N 055

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թ. դեկտեմբերի 22-ի N հրամանով տրված լիցենզիայի՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը.

Տարրական՝ 110 սահմանային տեղ:

Հիմնական՝ 150 սահմանային տեղ :

Դպրոցը նախատեսված է 260 աշակերտի համար:

Դպրոցի մուտքերն ունեն թեքահարթակներ: Առկա է պահակակետ:

Դպրոցում առկա է մեծ սպորտային դահլիճ, գրադարան, համակարգչային դասարան, բուժսենյակ, ուսուցչանոց, ՆԶՊ կաբինետ, շախմատի կահավորված սենյակ, ինճպես նաև առարկայական դասարաններ: Ջեռուցման եղանակը՝ լոկալ ջեռուցման ցանց: Առկա է ինտերնետ կապ:

Դպրոցն իրականացնում է հիմնական կրթություն, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

Դպրոցն իրականացնում է ռուսաց լեզվի խորացված ուսուցում:

Դպրոցի գտնվելու վայրն է ՀՀ Շիրակի մարզ, 3303, ք. Գյումրի, Շչեդրին փ.7:

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով:

Դպրոցի էլեկտրոնային հասցեն՝ http://gyumri30.schools.am/

Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/gyumri30dproc

6. ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

Օբյեկտի անվանումը և համառոտ բնութագիրը	Թողարկման կամ կառուցման տարեթիվը	Քանակը
Դպրոցական շենք	2000թ.	1
Մարզական և հանդիսությունների դահլիճ	2007թ.	1
Բուժսենյակ		1
Շախմատի սենյակ		1
Ռեսուրսային սենյակ		1
Պահակակետ		1
Ճաշարան		1
Առարկայական սենյակ /կաբինետ/		8
Առանձնասենյակների թիվը		3
Ընդամենը		**18**
Հեռուստացույց	1995թ.	1
Հեռուստացույց	2007թ.	1
Նվագարկիչ DVD	2002թ.	1
Դաշնամուր«Սևան»	2002թ.	1
Կարի մեքենա«Չայկա 142»	1982թ.	1
Կարի մեքենա «Պադոլսկ»	1982թ.	1
Երաժշտական կենտրոն	2007թ.	1
Էլեկտրական սալիկ- ջեռոց	2007թ.	1
Սառնարան	2007թ.	1
Սեղան սառեցումով	2007թ.	1
Միկրոալիքային վառարան	2007թ.	1
Էլեկտրական ջրատաքացուցիչ	2007թ.	3
Ներժավե սեղան 1200*600	2018թ.	1
Ներժավե սեղան 1200*500	2018թ.	2
Ջրատաքացուցիչ 30 լիտր տարողությամբ	2018թ.	1
Սառնարան 250-300 լիտր տարողությամբ	2018թ.	1
Էլեկտրական կշեռք	2018թ.	1
Ջրի դիսպանսեր	2018թ.	1
Սառնարան «Վիտրինա»	2018թ.	1
Ընդամենը		**22**
Աշ.սեղան-նստ./մոխրագույն/		60
Գրասեղան/Կարիտաս/	2001թ.	2
Գրատախտակ /Կարիտաս/	2001թ.	13
Գրասեղան տնօրենի	2001թ.	1
Ուսուցչի սեղան	2001թ.	8
Գրապահարան	2001թ.	10
Աշակերտ.սեղան-նստարան	2001թ.	53
Աշակերտական սեղան	2001թ.	10
Ուսուցչի սեղան	2001թ.	1
Ուսուցչի գրասեղան	2001թ.	5

Ուսուցչի պահարան	2007թ.	3 զույգ
Համակցված պահարան	2007թ.	2 զույգ
Ամանների լվացարան	2007թ.	1
Բուֆետի վաճառասեղան	2007թ.	1
Մարզանստարան	2007թ.	2
Մարզապատ	2007թ.	4
Բասկետբոլի վահան	2007թ.	2
Բժշկական թախտ	2007թ.	1
Ձեռքի գնդակի դարպաս	2007թ.	2
4-տեղանի ճաշասեղան-աթոռ	2007թ.	9 կոմպ.
Պահարան	2007թ.	2
Ուսուցչի սեղան	2007թ.	2
Գորգ /3*4/	2007թ.	1/24 քմ/
Գորգ /2*3/	2007թ.	1/24 քմ/
Գորգ/3*5/	2007թ.	1/15 քմ/
Պահարան	2001թ.	3
Ուսուցչի սեղան	2001թ.	2
Ուսուցչի աթոռ	2001թ.	2
Ընդամենը		**204**
Բազկաթոռ	2001թ.	5
Սալյակ	2001թ.	1
Ժամացույց	2001թ.	3
Սեղան աշակերտական /1տեղ./	2001թ.	52
Սեղան աշակերտական /2տեղ./	2001թ.	8
Աթոռ տարբեր տեսակի	2001թ.	35
Գրասեղան	2001թ.	2
Պահարան	2001թ.	3
Գրասեղան	2001թ.	8
Էլեկտրական տաքացուցիչ	2001թ.	1
Շախմատ	2013թ.	4
Պաստառ ՆԶՊ	2001թ.	1
Ալեհավաք	2001թ.	1
Աթոռ (Կարիտաս)	2001թ.	12
Կրակմարիչ	2001թ.	4
Համակարգչային սեղան	2005թ.	6
Տումբա տնօրենի	2013 թ.	1
Աշակերտական աթոռ	2001թ.	20
Կափարիչով աղբաման	2001թ.	2
Կախիչ	2001թ.	2
Աշակերտական սեղան	2001թ.	10
Կլոր սեղան	2001թ	2
Գրատախտակ	2001թ.	10
Երկկողմանի կախիչ	2001թ.	2
Արտադրական սեղան	2001թ.	1
Արտադրական դարակաշար	2001թ.	1
Դահլիճի աթոռ	2007թ.	136
Կիսափափուկ աթոռ	2007թ.	12
Մարզաճոպան	2007թ.	2
Նստարան զգեստ փոխելու	2007թ.	8
Մարզագույքի դարակաշար	2007թ	2
Միակողմանի պատի կախիչ	2007թ.	4
Բահ	2001թ.	4
Քլունգ	2001թ.	1
Մանկական սպորտային ժիլետ	2001թ.	8
Ձագար	2001թ.	10

Կոն	2001թ.	5
Օղակ	2001թ.	5
Ձող	2001թ.	2
Կրակմարիչ	2001թ.	2
Շախմատի սեղան-աթոռ	2013թ	12
Շերտավարագույր	2015թ.	1/45 քմ/
Տոնածառ	2015թ.	1
Համակարգիչ CPU 5700	2012թ.	1
Ուսուցչական սեղան	2009թ.	2
Սեղան խաղային կլոր	2008թ.	2
Սեղան ուսուցչի	2008թ.	3
Սեղան աշակերտի	2008թ.	10
Աթոռ աշակերտի	2008թ.	20
Պահարան	2009թ.	4
Ուսուցչական աթոռ	2008թ	3
Ուսուցչական աթոռ	2009թ.	2
Տարրական դաս.աշխ.գույք	2011թ.	12
Փոշեկուլ PANASONIK	2016թ.	1
Աթոռ	2017թ.	6
Ընդամենը		**478**
Համակարգիչ	2012թ.	1
Բազմաֆունկցիոնալ տպիչ	2012թ.	1
Հոսանքի անխափան սնուցման սարք(UPS)	2012թ.	1
Համակարգիչ	2012թ.	2
Համակարգիչ(PEN4Ա խումբ)	2012թ.	4
Համակարգիչ(PEN4Բ խումբ)	2012թ.	1
Սկաներ	2012թ.	1
Լազերային տպիչ	2012թ.	1
Հաբ 16 մուտք	2012թ.	1
Համակարգիչ(PEN4)	2010թ.	1
Ինտերակտիվ պրոեկտոր optomaw319USTire տեխնոլոգիական-DLP տեսակը	2019թ.	1
Ընդամենը		**15**
Կոնեկտոր	2011թ.	12
«Խաղում են հայերեն» սկավառակ	2011թ.	1
Ընդամենը		**13**
Մարդու կմախք	2001թ.	1
Մանրադիտակ	2001թ.	2
Լույսի անդրադարձման և բեկման օրենք զուգադրող սարք	2000թ.	1
Դեֆորմացիան բացատրող սարք	2000թ.	1
Էլեկտրաստատիկ սարք	2000թ.	1
Էլեկտրական հոսանք ցուցադրող սարք	2000թ.	1
Էլեկտրական հոսանք կարգավորող սարք	2000թ.	1
Էլեկտրաստատիկայի օրենք ցուցադրող սարք	2000թ.	1
Օպտիկայի օրենքը ցուցադրող սարք	2000թ.	1
Վակուումային սարք	2000թ.	1
Լույսի սպեկտոր ցուցադրող սարք	2000թ.	1
Ընդամենը		**12**
Պարբերական համակարգ	2000թ.	1
Սրվակներ	2000թ.	10
Մոլեկուլ կառուցելու մոդել	2000թ.	4 տուփ
Չափագլան	2000թ.	1
Ապակե ձագար	2000թ.	1
Ջտիչ ձագար/	2000թ.	1

Նյութերի պահպանման անոթ	2000թ.	2
Փորձանոթի տակդիր	2000թ.	1
Չափանոթ	2000թ.	1
Անջատ մոլեկուլներ	2000թ.	1 տուփ
Մարդու ներքին օրգանների մուլյաժ	2000թ.	1
Գիբոնի գանգ	2000թ.	1
Օրանգուտանի գանգ	2000թ.	1
Պիտկանթրոսի գանգ	2000թ.	1
Նեանդերթալցու գանգ	2000թ.	1
Կրոմանյոնցու գանգ	2000թ.	1
Հնագույն մարդու գանգ	2000թ.	1
Ժամանակակից մարդու գանգ	2000թ.	1
Ատամների հավաքածու	2000թ.	1
Աչքի մուլյաժ	2000թ.	1
Սրտի մուլյաժ	2000թ.	1
Երիկամի մուլյաժ	2000թ.	1
Ուղեղի մուլյաժ	2000թ.	1
Ուսագոտու ոսկորի մուլյաժ	2000թ.	1
Կոկորդի մուլյաժ	2000թ.	1
Ձեռքերի մուլյաժ	2000թ.	1
Ոտնաթաթի մուլյաժ	2000թ.	1
Ձեռքերի ջլերի և ոսկորների միացման մուլյաժ	2000թ.	1
Ոտքի ջլերի և ոսկորների մուլյաժ	2000թ.	1
Կոնքագոտու մուլյաժ	2000թ.	1
Մաշկի մուլյաժ	2000թ.	1
Ականջի մուլյաժ	2000թ.	1
Կրծքավանդակի օրգանների մոդել	2000թ.	1
Մանրապատրաստուկների հավաքածու	2000թ.	1
ԴՆԹ-ի երկպարուր շղթա	2000թ.	1
Երկրակեղևի կառուցվածք	2000թ.	1
Ռելիեֆ	2000թ.	1
Խեղանիկ	2000թ.	1
Կախիչ	2000թ.	1
Ծանրոց մեծ և փոքր	2000թ.	4տուփ
Նյուտոնի խողովակ	2000թ.	1
Բժշկական արկղ	2000թ.	1
Կալորիմետր	2000թ.	1
Մագնիսներ	2000թ.	2
Լաբորատոր գույք(բնագիտ., ֆիզիկա)	2000թ.	165
Լաբորատոր գույք(ֆիզիկա)	2000թ.	27
Ընդամենը		**253**
Գեղարվեստական գրքեր	2000թ.	215
Ռուս-հայերեն բառարան	2000թ.	1
Արևելյան սիրավեպեր	2000թ.	1
Ընդամենը		**217**
Թենիսի ցանց	2019թ.	2
Թենիսի ռակետ	2019թ.	8
Այծիկ	2021թ.	1
Կամրջակ	2021թ.	1
Մարմնամարզական ներքնակ	2021թ.	8
Մարզասարք	2021թ.	1
Պարան 7մ	2021թ.	1
Մարզումներ Օղակ մեծ	2021թ.	4
Մարզումներ Օղակ փոքր	2021թ.	4
Պոմպ ձեռքի	2021թ.	1

Մարզումների անիվ	2021թ.	2
Պլաստմասսե բուրգ փոքր	2021թ.	7
Պլաստմասսե բուրգ մեծ	2021թ.	7
Արգելների հավաքածու	2021թ.	4
Սեղանի թենիսի գնդակ	2021թ.	1
Նստարան	2021թ.	2
Զուգափայտ	2021թ.	1
Օղակներ	2021թ.	1
Մարզման գանտելի հավաքածու	2021թ.	1
Ֆիտնես գնդակ	2021թ.	2
Վայրկյանաչափ և սուլիչ	2021թ.	2
Ծանր գնդակ	2021թ.	2
Բասկետբոլի շիթ	2021թ.	2
Սեղանի թենիս	2021թ.	1
Գնդակ ֆուտբոլի	2022թ.	10
Գնդակ վոլեյբոլի	2022թ.	10
Գնդակ բասկետբոլի	2022թ.	5
Նստարան	2022թ.	2
Պարան	2022թ.	1
Մարմնամարզական ներքնակ	2022թ.	9
Հեծանիվ	2021թ.	1
Ընդամենը		**104**
Մինի համակարգչի հավաքածու	2019թ.	5
Համակարգչի հավաքածու եռաչափ տպիչի համար	2019թ.	1
Համակարգչի հավաքածու շաղափային և լազերային հաստոցի	2019թ.	1
Համակարգչային սեղան 1	2019թ.	1
Համակարգչային սեղան 2	2019թ.	1
Համակարգչային սեղան 3	2019թ.	6
Համակարգչային աթոռ	2019թ.	16
Եռաչափ տպիչ Բզեզ 2.0	2019թ.	1
Փոշեկուլ GORENJE VC1411	2019թ.	1
Ռոբոտ կոնստրուկտորի հիմնական հավաքածու	2019թ.	1
Նորացման և գործիքների լրացուցիչ հավաքածու	2019թ.	1
Ռոբոտի տեխնիկական էլեկտրոնային հանգույցների լրացուցիչ հավաքածու	2019թ	1
Ավտոմատացման և էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու	2019թ	1
Թվային կառավարման շաղափային և լազերային հաստոց	2019թ.	1
Համակարգիչ	2022թ.	1
Ստեղնաշար	2022թ.	1
Ընդամենը		**40**

Տվյալներ հաստատության բուժկետի առկայության վերաբերյալ

Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը	Բուժաշխատողների թիվը	Բուժկետում առկա գույք	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ	Բուժկետի սանիտարական վիճակը
1-ին հարկ, 8.1քմ	Դպ.բուժքույր 1	Գրասեղան1, աթոռ2,դեղորայքի պահարան1,տանոմետր1,ջեր մաչափ, մահճակալ, բժշկական կշեռք	Վերանորոգված է	բավարար

Տվյալներ հաստատությունում սննդի կետի առկայության վերաբերյալ

Սննդի կետի տեսակը/բուֆետ, ճաշարան	Միաժամանակ սնվելու հնարավորություն ունեցող անձանց թիվը և տարածքը/քմ	Սառը և տաք հոսող ջրի առկայությունը	Լվացարանի և հիգիենայի պարագաների առկայությունը	Տաք սննդի հնարավորությունը
ճաշարան	28.8	առկա	առկա	առկա

Տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ

Ռազմագիտության կաբինետ	22.1քմ	Չունի
Համակարգչային լաբորատորիա	32քմ	Առկա

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	Տարածքը/քմ/	Վերանորոգման կարիքը
Ֆիզիկայի լաբորատորիա, կաբինետ	32քմ	Չունի
Քիմիայի լաբորատորիա, կաբինետ	20.35քմ	Չունի
Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ		Չունի

Դպրոցի սովորողների թիվը՝ ըստ տարեթվերի



Համաձայն տրված լիցենզիայի՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը

- Տարրական ընդհանուր I աստիճան՝ լիցենզիա 0562 /110տեղ/
- Հիմնական ընդհանուր II աստիճան՝ լիցենզիա 0551/150/
- Աշակերտներից 3-ը ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք /ԿԱՊԿՈՒ/
- Աշխատողների թիվը՝ 38:
- Դասարանների թիվը՝ 9:
- Աշակերտների թիվը՝ 163
    - Տարրական օղակ-62
    - Միջին օղակ-101
- Դասարանների միջին խտությունը՝ 18-19աշակերտ:
- Ուսուցիչ աշակերտ հարաբերությունը 1/7:

Դպրոցն ունի 3 առարկայական մասնախմբեր

- *Հումանիտար*
- *ԲՏՃՄ*
- *Տարրական*

N	6.09.2023թ.-ի դրությամբ	
1.	Ուսուցիչների ընդհանուր թիվը	16
2.	Վարչական աշխատողների թիվը	5
3.	Սովորողների թիվը	163
4.	Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ	16
5.	Տարակարգ ունեցող ուսուցիչներ	0
6.	Կամավոր ատեստավորված ուսուցիչներ	1
7.	Առարկայական մեթոդմիավորում	3
8.	Ուսումնաօժանդակ անձնակազմ	8
9.	Հաշվապահ	1
10.	Գործավար	1
11.	Համատեղությամբ աշխատող ուսուցիչներ	0
12	Ուսուցիչ/աշակերտ փոխհարաբերությունը	10

Վարչական աշխատողների քանակը նախորդ 5 տարիներին



Ուսուցիչների տարիքային կազմը



7.ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Գյումրու N 30 միջն.դպրոց» ՊՈԱԿ 2023թ փոփոխված հաստիքացուցակ

Հաստիքացուցակ

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը /դրույք/	Սահմանվող պաշտոնային դրույքաչափը առանց հավելավճարների/դրամ/	Այլ հավելավճարներ /դրամ/	Սահմանվող պաշտոնային դրույքաչափը՝ հավելավճարները ներառյալ /դրամ/	Ընդամենը ամսական աշխատավարձի ֆոնդ /դրամ/	Ընդամենը տարեկան աշխատավարձի Ֆոնդ /դրամ/
1	2	3	4	5	7=4+5+6	8=7*3	9=8*12
	ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ						
	Տնօրեն	1.0					
	Տնօրենի տեղակալ ուսումն. Գծով	1.0					
	Մասնագիտական աջակցություններ ի գծով տնօրենի տեղակալ						
	Վարչատնտեսական մասի համակարգող	1.0					
	Հաշվապահ	1.0					
	Ընդամենը	5.0					
	ՈՒՍՈՒՄՆԱ-ՕԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ						
	Զինղեկ	1.0					
	Քաղպաշտպանություն	0.25					
	Համակարգ, օպերատոր	1.0					
	Գրադարանավար	1.0					
	Դաստ.աշխ.կազմ.	1.0					
	Հոգեբան	1.0					
	Սոց.մանկավարժ	1.0					
	Ուսուցչի օգնական	1.5					

	Տնտեսվար	1.0					
	Ընդամենը	7.75					
	ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ						
	Հավաքարար	4.0					
	Գործավար	1.0					
	Հնոցապան	3.0					
	Խոհարար	0.5					
	Ընդամենը	8.5					
	ԸՆԴԱՄԵՆԸ	0					

Ուսուցիչների դրույքների թիվը 12.2
Միջին դրույքաչափը /դրամ/ 114 158

Փաստացի ուսուցիչների թիվը 16

Ուսուցիչների դրույքների թիվը 12.2

Ուսումնական հաստատության մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները.

ա. սովորող - ուսուցիչ հարաբերությունը՝ 10
բ. սովորող – սպասարկող - վարչական անձնակազմ հարաբերությունը՝ 19.6
գ. դասարանների միջին խտությունը՝ 18
դ. ուսուցչի միջին աշխատավարձը՝ 95400
ե. վարչական աշխատողների միջին աշխատավարձը՝ 92576

Ուսուցիչների դրույքների թիվը՝ 12.2
Միջին դրույքաչափը /դրամ/ ՝ 114 158
Փաստացի ուսուցիչների թիվը՝ 16

Ֆինանսավորումը նախորդ 5 տարիներին



	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ	2023թ/9ամիս/
Տարեկան ֆինանսավորում	50996.7	47106.1	48925.0	48211.6	36051.7
Տարեկան աշխատավարձի ֆոնդ	43661.3	42942.3	41937.4	42712.6	29151.0
Տարեկան կոմունալ և այլ ծախս	6955.6	4122.2	4104.7	5063.5	4446.0
Գրքերի գումար	64.0	60.0	64.0	00	

- Ուսուցչի միջին ամսեկան աշխատավարձ՝ 95400
- Վարչական միջին ամսեկան աշխատավարձ՝ 92576

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ուժեղ և թույլ կողմերը

Ուժեղ կողմ

- Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները
- Աշխատավարձի, հարկերի ժամանակին և կանոնավոր վճարումները

Թույլ կողմ

- Անհրաժեշտ ուսումնանյութական բազայի անբավարար ապահովվածություն
- «Շրջանավարտների խորհրդի», «Հոգաբարձուների խորհրդի» բացակայություն և հետևաբար նրանցից ակնկալվող նվիրատվությունների բացակայություն
- Աշխատակազմի պարգևավճարների բացակայություն

8.ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ.



9. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ.

Գյումրու թիվ 30 հիմնական դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ և առաջ կատարել եմ իրավիճակի վերլուծություն, բացահայտել եմ դպրոցի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու հնարավոր ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ խնդիրների լուծման ընթացքում:

10.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Շենքը հիմնանորոգման կարիք չունի : ❖ Շենքը համապատասխանում է սեյսմակայունության նորմերին: ❖ Դպրոցը ունի ապաստարան: ❖ Տանիքը, պատուհանները գտնվ:ում են բարվոք վիճակում: ❖ Տարածքը ցանկապատված է, անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: ❖ Արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ շենքին: ❖ Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց: ❖ Պահպանված են սովորողների ու աշխատակազմի համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը: ❖ Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր: ❖ Դպրոցն ունի լոկալ ջեռուցման անվտանգ համակարգ: ❖ Միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, որոնք համապատասխանում են սանիտարական նորմերին: ❖ Դպրոցն ունի բակ: ❖ Շենքը հարմարեցված է ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժմանը և ուսուցումն ապահովող պայմաններին /թեք հարթակներ/: ❖ Ուսումնական հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով /օճառ, թուղթ /: ❖ Կոյուղին, ջրագծերը գտնվում են բարվոք վիճակում: ❖ Առկա է պահակակետ: ❖ Ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները:	• Տեսախցիկների բացակայությունը • Ֆիզիկապես մաշված գույք :

11.ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

- Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան ներառում է սովորողների համար անհրաժեշտ տարածքներ, կառույցներ, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ և սարքավորումներ, համակարգչային դասարաններ: /Կրթության մասին օրենքի 48-րդ հոդված,2-րդ կետ/

Դպրոցի նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով անհրաժեշտ է ստեղծել հոգաբարձուների խորհուրդ լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու նպատակով և մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ: Այդ կառույցներն են՝ Կրթության կառավարման լիազորված մարմինը, ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունները, զանգվածային լրատվության միջոցները:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Դպրոցն ունի գործող գրադարան, 372 գեղարվեստական գիրք: • Ունի « Արմաթ »լաբորատորիա: • Առկա է մարզական և հանդիսությունների դահլիճ: • Համակարգչային դասարան: • Ունի ճաշարան, որը համապատասխանում է սանիտարահիգենիկ պայմաններին: • Առկա է բուժսենյակ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն: • Առկա են առարկայական դասասենյակներ: • ՆԶՊ կաբինետ, որն անվանակոչված է դպրոցի նախկին սան Միքայել Վարդանյանի անվամբ: • Շախմատի կահավորված սենյակ, որն անվանակոչված է դպրոցի շրջանավարտ ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ Հովհաննես Խալիկյանի անվամբ: • Առկա է ինտերնետ կապ: • Ուսումնական հաստատությունը ունի ռեսուրս-սենյակ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները մեկուսացված չեն: • Ուսումնական հաստատությունում ամեն տեղ՝ դահլիճներում, դասասենյակներում, գրադարաններում և այլուր, տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն: • Դասարանները կահավորված են: • Աշխատակազմի աշխատանքային սենյակները հարդարված են:	• Ֆիզիկապես մաշված գույք • Դպրոցը չունի ուսումնական լաբորատորիաներ, այդ թվում ֆիզիկայի, քիմիայի: • Չկա ունիվերսալ դասարան՝ հագեցած անհրաժեշտ սարքավորումներով: • Դասասենյակները հագեցած չեն ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով, ուսումնական պարագաներով: • Գրադարանը որպես ռեսուրս -կենտրոն հագեցած չէ ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով : • Դպրոցը չունի հատուկ ուսումնական դասասենյակներ արտադպրոցական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացման համար: • Խմբակների համար անհրաժեշտ գույքի, ուսումնական պարագաների, ուսումնադիդակտիկ նյութերի բացակայություն: • Դպրոցում առկա չեն ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումներ լսողության և տեսողության գործառույթի սահմանափակում ունեցող սովորողների համար: • Խելամիտ հարմարեցումների մատչելիության ապահովման բացակայություն, որը կնպաստի ներառական կրթության արդյունավետության բարձրացմանը:

Նպատակ1

1. Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում

Խնդիրներ

1. ժամանակակից գրադարանի կահավորում

2.Համակարգչային կաբինետի համալրում/հագեցում նոր համակարգիչներով

Գործողություններ

1.Կազմել ծախսերի նախահաշիվ:
2.Նախապատրաստել/վերանորոգել/ տարածքը:
3.Ձեռք բերել անհրաժեշտ գույք:

1.Կազմել ծախսերի նախահաշիվ:
2. Ձեռք բերել լաբորատոր նյութեր:
3.Համակարգչային կաբինետը համալրել նոր համակարգիչներով, տեխնիկայով:
4.Ստեղծել հոգաբարձուների խորհուրդ լրացուցիչ միջոցներ ձեռք բերելու համար:
5.Մշտապես համագործակցել առանձին կառույցների և նրանց ներկայացուցիչների հետ դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու համար:
6.Ջանքեր ներդնել եղած նյութատեխնիկական բազան արդյունավետ օգտագործելու ուղղությամբ:

12.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են հաղորդակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդ միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհրուրդներ[3]:

[3] ՀՀ պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 77-րդ կետ

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ՝ կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքներ: • Դպրոցում կա 3 առարկայական մեթոդական միավորում, որոնք ամիսը 1 անգամ գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում աշխատանքներ: • Դպրոցը համագործակցում է ծնողների հետ, գործուն մասնակցություն ունի համայնքի հիմնախնդիրների լուծմանը՝ աշակերտներին ներգրավելով այդ գործընթացների մեջ, որպես կամավորներ: • Մեծ ակտիվությամբ գործում է աշխորհուրդը: ԱԽ-ը ակտիվ աշխատանքներ է տանում Հայկական Կարիտաս ԲՀԿ-ի հետ: • Դպրոցի բոլոր խորհուրդները համագործակցում են միմյանց հետ: • Խուրհուրդը քննարկում է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվություններ: • Խորհուրդը հաստատում է դպրոցի կազմակերպման կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները: • Մանկավարժական խորհուրդը/ՄԽ/ քննարկում է Հանրակրթության պետական չափորոշիչի/ՀՊՉ/ պահանջներին համաձայն հանրակրթական ծրագրերի իրագործման հարցերը: • Մխ-ն քննարկում է ԿԱՊԿՈՒ սովորողի անհատական ուսուցման պլանը/ԱՈՒՊ/: • Հաստատության Մխ-ն քննարկում է սովորողների ուսումնառության որակը, ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը: • ՄԽ հավանություն է տալիս տարեկան աշխատանքային պլանին, ուսումնական պլանին, դասաբաշխմանը:	• Ձևավորված չէ ծնողական խորհրդի /ԾԽ/ամուր կապը դպրոցի կառավարման և մանկավարժական խորհրդի հետ: • Մանկավարժական համակազմի մասնագիտական կարողունակություններին ուղղված աշխատանքների բացակայություն: • Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության վերահսկողության բացակայություն: • Ծնողները բավարար տեղեկացված չեն երեխայի դաստիարակության ժամանակակից սկզբունքների, մոտեցումների և հնարների մասին: • Բացակայում է դպրոցի կապը այլ կրթական հաստատությունների, ինչպես նաև շահառու կազմակերպությունների հետ: • Ուսումնական հաստատություն- համայնք համագործակցության բացակայություն: • Միջազգային մրցույթներում մանկավարժների ներգրավվածության բացակայություն: • Դպրոցի զարգացման ծրագրի կատարման հետևողականության բացակայություն: • Մ/Մ նախագահները արդյունավետ չեն կազմակերպում իրենց աշխատանքները, որի արդյունքում ուսուցիչները հետևաղականություն չեն ցուցաբերում:

Նպատակ2

Կառավարման մարմնի դերի բարձրացում

Խնդիրներ

1. Գործնականում կիրառել մանկխորհրդի լիազորությունները
2. Ակտիվացնել աշխորհրդի գործունեությունը
3. .Ստեղծել շրջանավարտների խորհուրդ
4. Ձևավորել սերտ համագործակցություն ԾԽ-ի հետ

Գործողություններ

1 .Գործնականում կիրառել մանկխորհրդի լիազորությունները	2.Ակտիվացնել աշխորհրդի գործունեությունը	3.Ստեղծել շրջանավարտների խորհուրդ	4.Ձևավորել սերտ համագործակցություն ԾԽ-ի հետ
1.Ապահովել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի միջոցառումներին, մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին: 2.Ամրապնդել մյուս խորհուրդների հետ համագործակցությունը: 3.Ընդունել որոշումներ ուսումնանյութակա՝ բազայի հարստացման ուղղությամբ:	1.Կազմակերպել բանավեճեր, մրցույթներ, որոնք նպատակաուղղված են աշակերտների ինքնադրսևորմանը և ազատ կարծիքի արտահայտմանը: 2.Ապահովել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-համայնք առողջ աշխատանքային հարաբերություններ: 3.Ապահովել աշակերտների կրթությունը, ինքնակրթությունը և նպաստել նրանց համակողմանի զարգացմանը: 4.Ապահովել սովորողների և աշխատակազմի միջև առողջ մթնոլորտ, նյութական ու	1.Խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: 2.Նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը: 3.Ձևավորել արտաբյուջետային ֆոնդ: 4. Շրջանավարտների խորհուրդը պետք է գտնի բարերարներ, ովքեր ներդրումներ և նվիրատվություններ կկատարեն: 5.Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ ու մատչելի՝ բարերարի, դպրոցի և տեղական	1.Ամրապնդել ծնողի և դպրոցի կապը հանդիպումների, սեմինարների, միջոցառումների միջոցով: 2.Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման , դաստիարակության գործընթացին: 3.Ծնողներին ներգրավել իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին: 4.Կազմակերպել խորհրդատվություններ և ապահովել տեղեկատվությամբ: 5.Մասնակցել ծնողխորհրդի նիստերին և

4.Տնօրենին ներկայացնել առաջարկություն դպրոցի զարգացման վերաբերյալ: 5. Շահագրգռել միջազգային մրցույթներում մանկավարժների մասնակցությունը: 6.Օժանդակել դպրոցում կրթական գործընթացին խորհրդատվական ծառայությունների հարցում: 7.Պետական նոր չափորոշիչով իրականացնել արդյունավետ գնահատում:	բարոյահոգեբանական պայմաններ: 5. Ոգևորել Ախ-ի անդամներին՝ ընդգրկվելու և ակտիվորեն մասնակցելու հասարակական ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող միջազգային ծրագրերին: 6.Ակտիվացնել ռազմահայրենասիրական աշխատանքը դպրոցում. «Երիտասարդ երկրապահ»: «Ճանաչիր Հայրենիքը»	ինքնակառավարման ու պետական մարմինների համար:	հանդես գալ առաջարկություններով: 5.Խթանել հետաքրքիր նախաձեռնությունների իրականացումը: 6.Ստեղծել ծնողական լսարան երեխայի դաստիարակության ժամանակակից սկզբունքների, մոտեցումների, հնարների մասին տեղեկացնելու, և հմտություններ մշակելու նպատակով:

1.3Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Այն թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Դպրոցն ունի օրինակելի կանոնադրության հիման վրա մշակված կանոնադրություն: • Ուսումնական հաստատությունում վարչատնտեսական գործընթացի կառավարումը իրականացնում է համակարգողը: • Հաստատությունում կառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ: • Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի միջև կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ուսումնական ծրագրերը և ֆինանսական պլանավորման վերաբերյալ հարցեր: • Տնօրենը կառավարման մարմնի է ներկայացրել իր գործունեության հաշվետվությունները:	• Կառավարման մարմնի անդամների և տնօրենի հետ համատեղ աշխատանքը ձևական բնույթ է կրում: • Հաստատությունում տեղի ունեցող փոփոխությունների մասին ծնողներին և հանրությանը տեղեկատվություն չի ներկայացվել: • Հաղորդակցության արդյունավետության համար տնօրենի կողմից չկան մշակված հետադարձ կապի կանոնավոր ձևեր:

Նպատակ 3

Կառավարման մարմնի և տնօրենի միջև բաց և ազնիվ հաղորդակցության պահպանում

Խնդիրներ

1.Կառավարման մարմնի և տնօրենի պարտականությունների և իրավասությունների հստակեցում և հստակ սահմանում:

2.Տնօրենի և կառավարման մարմնի միջև կանոնավոր հանդիպումների ապահովում:

3. Հաստատության ներկա վիճակի, նախաձեռնությունների և ծրագրերի մասին տեղեկատվության փոխանակման ապահովում:

4. Տնօրենի և կառավարման մարմնի մասնակցությամբ հաստատության զարգացման ռազմավարական ծրագրի մշակում:

Գործողություններ

1.1 Կազմակերպել հանդիպումներ կառավարման մարմնի և տնօրենի մասնակցությամբ՝ ընթացիկ հարցերի քննարկման համար:
1.2 Կազմել պարտականությունների և իրավասությունների կանոնակարգ ինչպես կառավարման մարմնի, այնպես էլ տնօրենի համար:
1.3 Ներգրավվել սոցիալական միջոցառումներին և հանդիպումներին:
2. 1 Ստեղծել տեղեկատվական հայտարարությունների կանոնավոր համակարգ, որտեղ կնշվեն ձեռքբերումները, մարտահրավերները, կարևոր իրադարձությունները:
2.2 Կազմակերպել տեսակոնֆերանսներ, տեղեկատվության փոխանակման էլեկտրոնային հարթակներ:
2.3 Արդյունավետ հաղորդակցման և կոնֆլիկտների կառավարման հմտությունների վերաբերյալ անցկացնել դասընթաց:
3.Կազմակերպել համատեղ քննարկումներ ուսումնական հաստատության ռազմավարական նախաձեռնությունների, ծրագրերի և նպատակների համար:
3.2 Իրականացնել ակտիվ աշխատանք թիմի հետ և գնահատել արդյունքները:
4.1Ձևավորել աշխատանքային խմբեր, կոնկրետ խնդիրներ լուծելու,ծրագրեր մշակելու համար:
4.2 Կառավարման խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում,

13.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ-

Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Իրականացվում են դպրոց-ընտանիք փոխհամագործակցությունն ապահովող միջոցառումներ: ❖ Դպրոցի բոլոր խորհուրդները համագործակցում են միմյանց հետ: ❖ Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի , ԳԹԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, Շիրակի մարզպետարանի, համայնքապետարանի, Սեյսմիկ պաշտպանության Հյուսիսային ծառայության՝ բնակչության հետ տարվող աշխատանքների բաժնի, զորամասերի, ոստիկանության, Շիրակի ՏՄԱԿ-ի, «Հույսի կամուրջ»,«Կարիտաս», «Նոր Լույս» ՀԿ-ների հետ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և այլ կառույցների , Գիտության և մշակույթի Ռուսական կենտրոնի /Русский центр науки и культуры/հետ: ❖ Դպրոցը համագործակցում է «Թումո» ստեղծարար կենտրոնի հետ: ❖ Դպրոցը համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ:	❖ Համայնք-դպրոց կապը թույլ է զարգացած: ❖ Շահառու կազմակերպությունների, կրթական հաստատությունների և այլնի հետ չպլանավորված ինքնանպատակ համագործակցություն: ❖ «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթին մանկավարժների մասնակցության մոտիվացիայի պակաս: ❖ Դպրոցը չի համագործակցում այլ մարզերի դպրոցների հետ: ❖ Համայնքային ծրագրերի քիչ ներգրավվածություն: ❖ Ինտելեկտուալ զարգացման կենտրոնների, կրթական հաստատությունների հետ համագործակցության բացակայություն:

Նպատակ 4

Սովորողների սոցիալական հմտությունների զարգացում

Խնդիրներ

1 Համագործակցել ծնողական համայնքի և շահառու կազմակերպությունների հետ

2. Համագործակցել հասարակական կազմակերպությունների և կրթական հաստատությունների

3. Ձևավորել ակտիվ քաղաքացի

Գործողություններ

1.1Կազմակերպել հանդիպումներ սեմինարներ ծնողների համար, որտեղ կքննարկվեն դպրոցի գործունեության վիճակը, հեռանկարային ծրագրերը ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման հարցերը
1.2. Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ:
1.3 Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Ծնողական խորհրդին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում:
1.3 Դպրոցի միջոցառումներին հրավիրել ՏԻՄ-ին, այդ թվում շահառու կազմակերպությունների ղեկավարներին
1.4 Փոխադարձաբար ակտիվ մասնակցել տեղական ինքնակառավարման և հասարակական կազմակերպությունների միջոցառումներին:

2.1 Կազմակերպել այցեր, բանավեճեր, հանդիպում-քննարկումներ տարատեսակ ուսուցողական միջոցառումներ:

2.2 Ոգևորել և ընդգրկել նորանոր աշակերտների նմանատիպ միջոցառումների մեջ:

2.3 Կազմակերպել հանդիպումներ Հայաստանի միջազգային դպրոցների, ինչպես նաև պետական և մասնավոր կրթական հաստատությունների հետ և կատարել փորձի փոխանակում:

3.1Կազմակերպել էքսկուրսիաներ Հայաստանի պատմամշակութային վայրեր:
3.2. Դաստիարակել համագործակցող, հայրենասեր, ստեղծագործող, նախաձեռնող, կարողունակ քաղաքացի:
3.3 Անցկացնել բնապահպանական դասեր էկոդաստիարակության թեմայով:
3.4 Կազմակերպել այցելություններ մշակույթի կենտրոններ, թանգարաններ:

14. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ու ապահովող միջոցառումները

Ուժեղ կողմ	Թույլ կողմ

• Հաստատության մանկավարժները իրականացնում են թեմատիկ պլանավորում այն դասարաններում, որտեղ իրականացնելու են սովորողների ուսուցում:
• Դպրոցի կառավարման տեղեկատվական համակարգում(ԴԿՏՀ) իրականացրել են համակցված/հեռավար ուսուցում:
• Հաստատության զարգացման ծրագրի տեսլականից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան/ՈւԴԱՏ/ռազմավարական պլանավորում:
• Կազմում են օրվա պլան նոր չափորոշիչներին համապատասխան:
• Բոլոր ուսուցիչները ունեն բարձրագույն մանկավարժական համապատասխան որակավորում:
• Հաստատության ուսուցիչները մասնակցում են հերթական ատեստավորմանը, որը նպաստում է մասնագիտական կարողությունների զարգացմանը:
  • Մանկավարժները կատարում են գրանցումներ էլեկտրոնային մատյանում:
  • Հաստատության տվյալ ուսումնական տարվա դասաբաշխմամբ ապահովվում է առարկայի ծրագրի կատարումը:
  • Դպրոցի մանկավարժները դասղեկի առաջարկությամբ
  • մասնակցում են ծնողական ժողովներին:
• Մասնակցում են մեթոդմիավորման(մ/մ)նիստերին:
• Համագործակցում են ուսուցչի օգնականի հետ:
	• Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ:
	• Հաստատության ներդպրոցական վերահսկողության (ՆԴՎ)պլանավորման բացակայություն:
	• ՏՀՏ կիրառման քիչ հնարավորություն:
	• Դասի ընթացքում չեն կիրառվում նոր տեխնոլոգիաներ:
	• Կամավոր ատեստավորմանը մասնակցողների պակաս:
	• Մեծամասնություն են կազմում 60-ից բարձր տարիք ունեցող ուսուցիչները:
	• Ուսուցիչներից ոչ մեկը չունի տարակարգ:
	• Ուսուցիչների ոչ ճիշտ պատշաճ պատրաստվածությունը, որը ազդում է ուսման որակի վրա:
	• Ուսուցիչները դեռևս չեն տիրապետում պետական նոր չափորոշիչով իրականացվող գնահատմանը:
	• Ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու ուսուցիչների մի մասը չեն տիրապետում ՏՀՏ կիրառման հմտություններին:
	• Մասնախմբերի ներսում չեն կազմակերպվում մեթոդական զեկույցներ, քննարկումներ:
	• Ուսուցիչները ունեն մոտիվացիայի պակաս:
	  • Սկսնակ ուսուցիչների համար 1-ին դասարանի հավաքագրման խնդիրը:
	  • Կազմակերպական և նյութատեխնիկական պայմանների անբավարար վիճակ, որը ազդում է ուսուցչի մասնագիտական գործունեություն իրականացնելու վրա:
	❖ Միջազգային վերապատրաստումների պակաս

• Ուսուցիչներն աջակցում են սովորողներին՝ կազմակերպելու տարաբնույթ միջոցառումներ, որը նպաստել է նրանց արժեքային համակարգի ձևավորմանը: • Դպրոցն ունի կամավոր ատեստավորում անցած մեկ ուսուցիչ: • ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացված վերապատրաստումների արդյունքում, ուսուցիչները կարողանում են մշակել ՀՊՉ-ին համապատասխան դասապլաններ, թեմատիկ միավորումներ: • Հաստատության մանկավարժները պահպանում են հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով , ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները: • Հաստատության ուսուցիչները ունեն 5 և ավելի տարվա փորձ: • Մասնակցում են հերթական ատեստավորմանը:	

Նպատակ 5

Հանրակրթական պետական ծրագրերի արդյունավետ կազմակերպում

↓

Խնդիրներ

↓

Արդիականացնել և զարգացնել մանկավարժական համակազմի մասնագիտական որակը

↓

Գործողություններ

1. Մեթոդական միավորումների հետ քննարկել խնդիրը, բացահայտել կարիքները:
2. Հարստացնել գրադարանը հանրակրթությանը վերաբերող գրքույկներով, մեթոդական ձեռնարկներով, պաստառներով:
3. Ուսումնասիրել ՀՊՉ –ն և դրանից բխող առարկայական ծրագրերը, փոփոխությունները, գնահատման մեթոդաբանությունը:
4.Ուսուցիչներին մասնակից դարձնել ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին:
5.Կազմակերպել պարբերաբար գործող սեմինար- պարապունքներ, որտեղ փորձառու ուսուցիչները կներկայացնեն իրենց փորձը:
6.Տնօրինության կողմից կազմակերպել դասալսումներ, արդյունքները քննարկել մեթոդմիավորումների նիստերում:
7.Համակարգչային բավարար գրագիտություն չունեցող ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստումներ:
8.Կազմակերպել ինֆորմատիկայի և այլ առարկաների ուսուցիչների կողմից համատեղ վարվող դասեր:
9. .Աջակցել ուսուցիչներին մշակելու, ներկայացնելու և տպագրելու մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
11. Ապահովել պայմաններ ուսուցիչների շարունակական ուսուցումն ու զարգացումը ապահովելու համար:
13.Իրականացնել ուսումնական նախագծեր:
14.Իրականացնել մանկավարժների վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում:
15. Իրականացնել հետադարձ կապ մանկավարժների կողմից ուսուցման գարծընթացում նոր հմտությունների, մեթոդների կիրառությունն ապահովելու համար:
16. Ապահովել ՏՀՏ վերապատրաստման շարունակականությունը:
17. Աջակցել ուսուցիչների մեդիագրագիտության բարձրացմանը:
18. Խթանել մասնակցելու մասնագիտական մրցույթների:
19. Անցկացնել մասնագիտական սեմինարներ, զեկույցներ ուսուցիչների որակավորման բարձրացման համար:
20. Օգնել ուսուցիչներին՝ ինտեգրելու մեդիագրագիտության բաղադրիչները տարբեր առարկաների ծրագրերում, անցկացնել ինտերակտիվ, գործնական ու հետաքրքիր դասեր ու նախագծեր, որոնք կօգնեն ձևավորել մեդիա և թվային հմտություններ:
21. Անհրաժեշտության դեպքում դասեր վարել հեռավար:

15.ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդի դարաշրջանում խիստ անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների զարգացումը սովորողների մոտ, մասնավորապես՝ ստեղծագործ, քննադատական ու համակարգված մտածողության, մեդիագրագիտության, ինքնուրույն սովորելու, համագործակցային աշխատանքի և այլ հմտությունների զարգացումը դարձել է անհրաժեշտություն:

Նորարարական տեխնոլոգիաների միջոցով հնարավոր է.

- արդյունավետ կիրառել ուսուցման նոր մեթոդները և տեխնոլոգիաները՝ համակցելով դրանք ուսուցման ավանդական մեթոդների հետ:
- Սովորողների համար մատչելի դարձնել ուսուցանվող նյութը և բարձրացնել առաջադիմությունը՝ մոտիվացնելով նրանց:
- Ապահովել բոլոր սովորողների համար որակյալ և արդիական կրթություն ստանալու համար պայմաններ:

Ուսումնական գործընթացում ՏՀՏ գործիքների կիրառումը նոր մակարդակի կհասցնի սովորողների գիտելիքները և հմտությունները:

Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց ՏՀՏ կիրառության: Ամեն օր դրանք օգտագործվում են թե՛ դպրոցի տնօրինության, թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների և նրանց ծնողների կողմից: Կիրառվում են էլեկտրոնային դասամատյաններ և օրագրեր: Դպրոցում կիրառվող մատենագրությունը աստիճանաբար թղթայինից անցում է կատարում

էլեկտրոնայինի: Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակմանը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Դպրոցն ունի ինտերնետ կապ: ❖ Բջջային հավելվածների և կրթական խաղերի օգտագործում, որոնց միջոցով սովորողները զարգացնում են հմտությունները և ստանում են ուսումնասիրվող նյութի մասին տեղեկատվություն Kahoot, Quizziz և այլ գործիքներով: ❖ MS Teams միասնական կրթական հարթակի առկայություն:	❖ Դասավանդման գործընթացում և դպրոցի կառավարման համակարգում նորարարությունների պակաս: ❖ ՈՒԴԱ պլանավորում միայն գործողությունների թվարկմամբ: ❖ ՈՒԴԱ արդյունավետ չի կառավարվում ՏՀՏ ինտեգրմամբ: ❖ Դասավանդողների ՏՀՏ պատրաստվածության, գիտելիքների և հմտությունների զարգացման և նրանց կողմից դասավանդման գործընթացում ՏՀՏ-ի ակտիվ օգտագործման պակաս:

Նպատակ 6

Նորարարություններ դասավանդման գործընթացում:

Խնդիրներ

1.Մանկավարժամեթոդական գործընթացում ներդնել ՏՀՏ գործիքներ:

2.Սովորողների մոտ զարգացնել տեղեկատվական և հաղորդակցական կարողություններ:

3.Սովորողների մոտ առաջացնել հետաքրքրություններ քննարկվող նյութի շուրջ:

4.Սովորողներին մղել ստեղծագործական հետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու:

Գործողություններ

1.Վերապատրաստել ուսուցիչներին նոր պահանջներին համապատասխան:

2.Համակարգչային դասարանները վերազինել նոր սերնդի համակարգիչներով:

3.Համագործակցել ՏՀՏ կիրառման փորձառություն ունեցող ուսուցիչների հետ:

4.Խրախուսել յուրաքանչյուր սովորողի աշխատանքը և ձեռքբերումը:

16. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան հավասար կրթություն ստանալու մատչելիությունը:

ՀՊՉ-ն ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների՝ կարողունակությունների և ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների: Հանրակրթական հիմնական ծրագրերը միտված են ակնկալվող վերջնարդյունների ապահովմանը: Ուսումնական հաստատությունում կրթական գործընթացը կազմակերպվում է՝ համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և ուսումնական հաստատության տարեկան ուսումնական պլանի:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Հաստատության զարգացման ծրագրի տեսլականից բխող ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորում: ❖ ՈՒԴԱ կարիքի գնահատում: ❖ Աշակերտների կարիքների համապատասխան ուսուցում: ❖ Դպրոցը ունի անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթեր, ուսումնական տարածք, գույք: ❖ Աշակերտները ունեն անհատական ձեռքբերումներ սպորտի բնագավառում:	❖ ՈՒԴԱ իրականացման և վերահսկողության պլանավորման բացակայություն: ❖ ՈՒԴԱ իրականացման փուլում ընթացիկ կարիքների գնահատում և գործընթացի արդյունավետության բարելավվում ՀՊՉ համապատասխան:

❖ Կրթական գործընթացը կազմակերպված է ՀՊՉ-ով սահմանված ուսումնառության վերջնարդյունքների: ❖ Միջոցառումները պլանավորված են և համապատասխանում են նպատակին: ❖ Ուսումնական հաստատությունում կրթական գործընթացը կազմակերպվում է՝ համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և ուսումնական հաստատության տարեկան ուսումնական պլանի: ❖ Հաստատությունում սովորողները ձեռք են բերում գիտելիքներ ՀՊՉ-ին համապատասխան: ❖ Հաճախում և մասնակցում են ուսումնական պարապունքներին:	❖ Համակողմանի և տարբեր ձևերով ՈՒԴԱ արդյունավետության գնահատման բացակայություն: ❖ Դպրոցը չունի առաջընթաց, զարգացում: ❖ Փորձառու ուսուցիչները կազմում են ինքնազարգացման պլան, սակայն իրականացումը համակարգված չէ: ❖ Մանկավարժների համար հստակ սահմանված մեխանիզմների բացակայություն: ❖ Գերազանց սովորող աշակերտների թիվը զիջում է բարձր և միջին առաջադիմությամբ սովորողների թվին*: ❖ Սովորողներից շատերը չեն տիրապետում մեդիագրագիտության կանոններին և հմտություններին:

*Տվյալները տրամադրել է N 30 դպրոցի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը 21.06.2023թ.: Ըստ վերջին երեք տարվա տվյալների՝

2020-2021 ուստարի, գերազանց՝ 36, հարվածային՝ 54:

2021-2022 ուստարի, գերազանց՝ 31, հարվածային՝ 45:

2022-2023 ուստարի, գերեազանց՝ 29, հարվածային՝ 41

Նպատակ 7

Ուսուցման որակի բարձրացում

Խնդիրներ

1. Բարձրացնել սովորողների մոտիվացիան և ձևավորել կարողունակությունները:
2. Իրացնել սովորողների կրթական իրավունքը ՀՊՉ-ին համապատասխան:
3. Բարձրացնել ուսուցիչների դասավանդման որակը:

Գործողություններ

1.1 Սովորողներին կարողունակությունները պահել ուշադրության կենտրոնում::
ա.Լեզվական կարողունակություն, բ.Սովորել սովորելու կարողունակություն,
գ.Սոցիալական կարողունակություն, դ.Թվային և մեդիագրագիտություն, ե.Մշակութային կարողունակություն:

1.2 Բացատրել իրենց ստանալիք գիտելիքների կիրառողունակությունը և օգտակարությունը:

1.3 Չափորոշչով սահմանել հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝ գիտելիք. հմտություն. դիրքորոշում. արժեքային բաղադրիչ:

1.4 Կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ՝ սլայդներ, տեսաժապավեններ, պաստառներ, աղյուսակներ, գործիքներ, նյութեր:

1.5.Կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ:

2.1 Զարգացնել մանկավարժական համակազմի դասավանդման մեթոդաբանությունը:

2.2 Սովորողների մոտ զարգացնել վերլուծական, քննադատական մտածողություն:

2.3 Կիրառել ինտերակտիվ մեթոդներ, իրավիճակային խնդիրներ, ստուգատես մրցույթներ:

2.4 Գնահատման չափանիշների հստակեցման միջոցով բարելավել ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

3.1 Համալրել համակարգչային դասարանը և առկա ուսումնամեթոդական բազան:

3.2 Կազմակերպել ուսուցիչների դասավանդման որակը բարձրացնող վերապատրաստումներ, ուսուցողական բաց դասեր, կոնֆերանսներ:

3.3 Բարձրացնել աշխատանքային կարգապահությունը:

3.4 Մեծ ուշադրություն դարձնել սովորողների մարդասիրական, քրիստոնեական , գեղագիտական ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

3.5 Ներառել բոլոր շահագրգիռ կողմերին կրթության որակի բարձրացման գործընթացում:

3.6 Ներդնել դասավանդման նորարական մեթոդներ(անհատականացված ուսումնառություն, խաղերի վրա հիմնված ուսումնառություն, հարցադրումների վրա հիմնված ուսումնառություն)կիրառել ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ և ռեսուրսներ:

3.7 Ձևավորել թիմային մշակույթ՝ սովորողների, ուսուցիչների և այլ աշխատակիցների միջև:

3.8 Ապահովել փոխըմբռման և համագործակցության մթնոլորտ:

3.9 Նպաստել տեղեկատվական/մեդիագրագետ սովորողի մեդիագրագիտության կարողունակությունների ձևավորմանը :

17. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Բոլոր սովորողները ապահովված են դասագրքերով: ❖ Հաստատության բոլոր սովորողները ունեն հավասար իրավունքներ: ❖ Ակտիվ մասնակցում են օլիմպիադաների, հանրապետական մրցույթների /Կենգուրու, Մեղու/: ❖ Սովորողները հաճախում են «Թումո» կենտրոն: ❖ Գրեթե բոլորը տիրապետում են ՏՀՏ գործիքներին: ❖ Ունեն նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով աշխատելու մեծ պատրաստակամություն: ❖ Սովորողները մասնակցում են սպորտլանդիաների և գրավում են ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական սպորտլանդիաների և գրավում են բարձր հորիզոնականներ: ❖ Մշտապես մասնակցում են բազկամարտի, բասկետբոլի, ֆուտբոլի, շախմատի, թեթև աթլետիկայի մրցումներին՝ այստեղ ևս գրավելով պատվավոր հորիզոնականներ: ❖ Դպրոցն իրականացնում է ներառական կրթություն: ԿԱՊԿՈՒ աշակերտները ունեն ֆիզիկական միջավայրի հարմարեցումներ: ❖ Սովորողները ստանում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն: ❖ Մասնակցում են ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների: ❖ Սովորողները դրսևորում են օրինակելի վարքագիծ և նրանց նկատմամբ չեն կիրառվում կարգապահական տույժեր: ❖ Հաստատությունը ապահովում է սովորողների առողջության պահպանման և ֆիզիկական ու մտավոր զարգացման դժվարությունները կանխարգելու միջոցառումներ:	❖ Որոշ աշակերտների անտարբերությունը ուսման նկատմամբ: ❖ Սոցիալապես անապահով ընտանիքի երեխաները հաճախակի են բացակայում դասերից: ❖ Սովորողների տարիքային հոգեբանությունը ճանաչելու ուսուցիչների ցածր կարողություններ: ❖ Երեխաների մոտ նվազ հետաքրքրությունը գրքի հանդեպ: ❖ Ծնողների անտարբերությունը, որը հանգեցնում է երեխայի մոտ ուսման նկատմամբ անտարբերություն: ❖ Աշակերտների թվի նվազում: ❖ Շնորհներով օժտված երեխաների համար տարբեր խմբակների բացակայություն/ռուսաց լեզվի, երգի, պարի/: ❖ Միջազգային կամ տեղական ծրագրերին մասնակցության բացակայություն: ❖ Մեթոդական դիդակտիկ նյութերի բացակայություն: ❖ Խելամիտ հարմարեցումների բացակայություն:

Նպատակ 8

Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում

Խնդիրներ

1.Ընդգրկել և ակտիվորեն մասնակցել հասարարական ակտիվությունը խթանող, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը նպաստող միջոցառումներին

2.Զարգացնել սովորողների ուսուցումը ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան

3.Բավարարել սովորողի համապատասխան կրթական կարիքը

Գործողություններ

1.1 Սովորողներին ինտեգրել հասարակական կյանքին:
1.2 Զարգացնել հասարակական ակտիվություն դրսևորելու հմտություններ:
1.3 Ձևավորել վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ:
1.4 Սովորողի մոտ զարգացնել ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն:
1.5 Սովորողների գիտելիքները հարստացնելու համար ստեղծել խմբակներ/ռուսաց լեզվի, երգի, պարի/
1.6 Ձևավորող գնահատման կանոնակարգման շնորհիվ ավելացնել սովորողների հետաքրքրությունն ուսուցանվող առարկաների նկատմամբ և բարձրացնել ուսումնառության արդյունավետությունը:

2.1 Սովորողներին ներկայացնել ըստ կրթական աստիճանների ուսումառության ակնկալվող վերջնարդյունքները, գնահատման ձևերը:
2.2 Ուսուցմանը զուգահեռ զարգացնել շրջակա միջավայրի պահպանության գործում սեփական դերն ու պատասխանատվությունը:
2.3 Նախապատրաստել մասնագիտական կողմնորոշանն ու ինքնուրույն կյանքին:
2.4 Խթանել սովորողի ինքնաճանաչման, ինքնազարգացման և ինքնագնահատման կարողությունների զարգացումը, նպաստել նրա անձնային որակների և դիրքորոշումների ձևավորմանը:

3.1 Տալ տեղեկատվություն երեխաների առողջության մասին:
3.2 Ապահովել պայմաններ սովորողի ֆիզիկական առողջության, ընդունակությունների զարգացման համար:
3.3 Ապահովել առողջ սնունդ:
3.4 Կազմակերպել երկարօրյա ուսուցում:
3.5 Կազմակերպել սովորողի հանգիստը և ժամանցը:
3.6 Պարբերաբար անցկացնել ուսումնական տարհանումներ:

18.ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ներկայումս մեր հանրապետությունը թևակոխել է կրթության բովանդակային բարեփոխումների նոր փուլ: Փոփոխվել է նաև Հանրակրթության պետական չափորոշիչը (ՀՊՉ), որը հիմնված է սովորողների հմտությունների կարողունակությունների վրա: Կրթական քաղաքականությունը մեծացնում է ուսուցիչների պատասխանատվությունը: Մերօրյա ուսուցիչը իր գիտելիքները, վարպետությունը և կարողունակությունները հարստացնելու խնդիրներ ունի, որպեսզի կարողանա գործունեության ընթացքում հավասարապես շեշտադրել սովորողների գիտելիքը, հմտությունը, դիրքորոշումը և արժեքային համակարգը:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Դպրոցի տնօրինությունն ունի դպրոցի ղեկավարման անհրաժեշտ պատրաստվածություն: ❖ Աշխատակազմը ծանոթ է ուսումնադաստիարակչական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտների ղեկավարման առանձնահատկություններին: ❖ Մանկավարժական թափուր տեղերի մրցույթներն իրականացվում են սահմանված ընթացակարգերի համաձայն՝ ապահովելով գործընթացների թափանցիկությունն ու արդարությունը: ❖ Դպրոցն ունի կամավոր ատեստավորում անցած մեկ ուսուցիչ ❖ Աշխատակիցները հետաքրքրքրություն են ցուցաբերում առցանց դասընթացների նկատմամբ:	❖ Աշխատակազմի լավ աշխատելու ցանկության պակաս: ❖ Ուսուցիչների խրախուսման սահմանափակ հնարավորություններ: ❖ Մանկավարժական համակազմի ինքնակատարելագործման , նախաձեռնության պակաս: ❖ Տարաբնույթ ծրագրերին մանկավարժների մասնակցության պասիվություն. (առցանց դասընթացներ, վեբինարներ, վարպետության դասեր, դասախուսություններ): ❖ Տարիքային համամասնությունը 60-ից բարձր: ❖ Մանկավարժների փորձի և գիտելիքների փոխանցումը աշակերտներին համակարգված չէ: ❖ Աշխատակազմի պաշտոնային պարտականությունների թերի կատարում: ❖ ՏՀՏ կիրառման հնարավորությունների բացակայություն: ❖ Կամավոր ատեստավորում- ուսուցիչների մասնագիտական կարողությունների կարիքի գնահատման բացակայություն: ❖ Ուսուցիչները չունեն տարակարգ: ❖ Ամենամյա սեմինարների բացակայություն, տեխնոլոգիաների և մոտեցումների ներդրման վերաբերյալ: ❖ Ինքնակրթակրթության բացակայություն:

Նպատակ 9

Անձնակազմի փուլային կառավարում

Խնդիրներ

1.Գնահատել անձնակազմը և համալրել այն՝ ըստ անհրաժեշտության

2.Մշակել աշխատակազմի շահադրդման մեխանիզմներ

3. Կազմակերպել փորձի փոխանակումներ հին և նոր աշխատողների ուսուցման և զարգացման համար

Գործողություններ

1.1 Ուսումնասիրել առկա անձնակազմը, նրա որակական մակարդակը, որոշել ապագա կադրերի պահանջարկը և ծրագրել նրանց հավաքագրումը:
1.2 Հավաքագրել կադրեր ներքին կամ արտաքին աղբյուրներից:
1.3 Կազմակերպել տարատեսակ (օրինակ.՝ կենսագրական. ազատ, խմբային և այլն) հարցազրույցներ նոր աշխատողների ընդունելությանն ընդառաջ:

2.1.Սահմանել պարգևատրումներ (դրամական, շնորհակալագրեր, պատվոգրեր ևն) աշխատանքի արդյունքից ելնելով:
2.2 Գնահատել աշխատանքի ոչ նյութական ասպեկտները, մասնավորապես սոցիալական, զգայական և այլն: Այս համատեքստում հոգ տանել աշխատակիցների մասին, որը կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը և արդյունավետությունը:
2.3 Բացահայտել աշխատողների ներուժը, գնահատել մասնագիտական որակները՝ ըստ այդմ ուղղորդել նրանց, ապահովել աշխատանքային առաջընթաց:

3.1 Կազմակերպել ուսումնական դասընթացներ և վերապատրաստումներ դպրոցի ներսում: Ակտիվ մասնակցություն ցուցաբերել նաև դպրոցից դուրս՝ այլ կազմակերպություններում կամ դպրոցներում կազմակերպվող վերոնշյալ միջոցառումներին:
3.2 Փորձի փոխանակման նպատակով մասնակցել տարբեր կոնֆերանսների, իրականացնել ուսումնական այցեր, տարբեր աշխատանքային հանդիպումներ: Մեծ տեղ հատկացնել նաև հեռավար ուսուցման համակարգին:

19. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և թույլ տալիս զուգորդել ուսուցման գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ: Այդ պատճառով շատ կարևոր է ունենալ հարմարավետ, մոտիվացնող ուսումնական միջավայր:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Հաստատության ուսումնական-ֆիզիկական միջավայրի հարմարեցումները կատարված են ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին համապատասխան: ❖ Դպրոցն ապահովված է դասագրքերով և ուսումնական գրականությամբ: ❖ Դպրոցն ունի համակարգչային կաբինետ: ❖ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայություն: ❖ Դպրոցը կազմակերպում է առողջ ապրելակերպի արշավներ, եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև շաբաթօրյակներ, ծառատունկ : ❖ Դպրոցը ունի կահավորված շախմատի սենյակ: ❖ Պատշաճ լուսավորված է: ❖ Առկա է սպորտային մեծ դահլիճ: ❖ Ուսումնական պլանը համապատասխանում է սովորողների կարիքներին : ❖ Վերանորոգվել և կահավորվել է դպրոցի ռեսուրսային սենյակը և հարակից սանհանգույցը: ❖ Առկա են թեքահարթակներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար:	❖ Հաստատության ուսումնադաստիարակչական ռեսուրսների հարմարեցումները կատարված չեն ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին համապատասխան: ❖ Համակարգչային դասասենյակը, գրադարանը հագեցած չեն անհրաժեշտ սարքավորումներով, նյութերով և ռեսուրսներով, մասնագիտացված հարմարեցումներով, որը կհամապատասխանի ուսումնական ծրագրերի կարիքներին: ❖ Դասասենյակները կահավորած չեն նոր գույքով: ❖ Բավականաչափ ձևավորված չէ սովորեցնելու և սովորելու ավանդույթը: ❖ օլիմպիական խմբակի բացակայություն: ❖ Դպրոցում գործում է ոչ արդի դաստիարակության համակարգ: ❖ Դպրոցը չունի քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիա:

Նպատակ 10

Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի ապահովում

Խնդիրներ

1.Ապահովել ուսումնական պլանի համատասխանությունը սովորողների կարիքներին

2.Ֆիզիկական միջավայրը ապահովել ԿԱՊԿՈՒ սովորողների համար:

3.Առարկայական կաբինետների ստեղծում

Գործողություններ

1.1 Ուսումնական պլանը կազմել ըստ սովորողների կարիքի:
1.2 Ստեղծել խմբակներ այն առարկաների համար, որոնցից դժվարանում են աշակերտները, ինչը կկրճատի կրկնուսուցումը:
1.3 Համալրել դասասենյակները նոր գույքով:

2.1 Դիմելով տարբեր ծրագրերի՝ դպրոցի ներսում կառուցել թեքահարթակներ, որի շնորհիվ ԿԱՊԿՈՒ սովորողները կկարողանան դասերին մասնակցել նաև 2-րդ հարկում:
2.2 Թեքահարթակների կառուցման համար համագործակցել նաև շահառուների՝ նախարարության, ՏԻՄ-ի, կրթության հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ:

3.1 Դասասենյակները համալրել ուսումնական գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով:
3.2 Գրադարանը պարբերաբար համալրել անհրաժեշտ գույքով և գրականությամբ:

20.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Ներառական կրթությունը ենթադրում է մտավոր և ֆիզիկական, տարբեր առանձնահատկություններով աշակերտների միմյանց կողք կողքի նույն դպրոցում և դասարանում սովորելը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ կան այդ թվում՝ ուսուցիչների կրթությունը և վերապատրաստումները, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումները և պատկերացումները, որոնք սպասում են իրենց տրամաբաբանական լուծումներին:
Թիվ30 դպրոցի ուսուցիչների, ծնողների և աշակերտների հետ անցկացված հարցազրույցի ընթացքում վեր հանեցինք բազմակարծության, ներառականության և մասնակցային արժեքների ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
❖ Հաստատությունն ունի ռեսուրս-սենյակ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ❖ Անհատական ուսուցման պլանները(ԱՈՒՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը Համագործակցում են ընտանիքի և թիմի այլ անդամների հետ, ❖ Կազմակերպվում են տնայցեր: ❖ Համագործակցում են դպրոցից դուրս գործող աջակցող կազմակերպությունների հետ: ❖ Սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին ցուցաբերվել է դրամական օգնություն, փոխանցվել դասագրքերի վարձավճարները: ❖ Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապրաստման: ❖ Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ:	❖ Դասի պլանը կազմված չէ համընդհանուր ձևավորմամբ: ❖ Դասասենյակները ապահովված չեն ԿԱՊԿունեցողների համար համապատասխան հարմարեցումներով: ❖ Զարգացած չէ թիմային աշխատանքը: ❖ Դպրոցի ներսում չկան համապատասխան միջոցներ՝ ուսումնամանկավարժական հարցերի վերաբերյալ միմյանց գիտելիքներ հաղորդելու համար: ❖ Ռեսուրսկենտրոնը կարիք ունի խելամիտ միջոցների հարմարեցմանը:

Նպատակ 11

Ժամանակակից կրթական միջավայրի պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում

Խնդիրներ

1. Ստեղծել բարենպաստ ուսումնական միջավայր, որտեղ սովորողներն ու ուսուցիչները կկարողանան ազատորեն արտահայտել կարծիքներն ու գաղափարները:

2.Վերահսկել. որ ուսուցիչները ճիշտ կազմակերպեն ԿԱՊԿունեցող սովորողների ներառման հետ:

3.Հագեցնել դասարանները համապատասխան հարմարեցումներով և ստեղծել հնարավորինս նպաստավոր միջավայր

4.Ապահովել համակարգի շարունակական բարելավումը

Գործողություններ

1.1 Կազմակերպել հանրային քննարկումներ արդիական հարցերի շուրջ, որտեղ սովորողները կարող են արտահայտել իրենց տեսակետները և քննարկել տարբեր կարծիքներ, սովորեն ընդունել բազմակարծությունը:
1.2 Պատշաճ կերպով վերապատրաստել ուսուցիչներին և տրամադրել համապատասխան Նյութեր:
1.3 Աշակերտների շրջանում կիրառել բարձրաձայն մտածելու ռազմավարություն:

2.1 Հաջող ներառական դասապլաններ կազմելու համար ուսուցիչներին ներգրավել մասնագիտական զարգացման գործընթացին և կիրառել դասավանդման արդյունավետ մոտեցումներ:
2.2 Ուսումնական գործընթացը արդյունավետ դարձնելու նպատակով կիրառել խաղային մոտեցումները:
2.3 Հոգեբանի, ուսուցչի օգնականի և դասղեկի հետ պետք է մշակի կանխարգելիչ միջամտությունների համակարգ՝ նվազեցնելու համար անցանկալի վարքի դրսևորումները:
2.4 Ստեղծել «Բարեկամության օր» որի ընթացքում տարբեր կարողությունների տեր սովորողները միասին կմասնակցեն սպորտային, գեղարվեստական և ժամանցային գործունեության:

3.1 Մանրամասն ուսումնասիրել անհրաժեշտ հարմարությունների պակասը դասասենյակներում, կազմել համապատասխան ցուցակներ և, ըստ պահանջի, կահավորել դրանք:
3.2 Կիրառել թիմային առաջադրանքներ :
3.3 Համատեղ ուսումնառությունը համադրել դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառության հետ:
3.4 Աջակցել երեխաներին դպրոցի արտադասարանային միջոցառումներին մասնակցելու հարցում, օրինակ ոչ ակադեմիական միջոցառումներ. Երաժշտական խմբակներ, դասերից հետո գործող զանազան խմբակներ:
3.5Ստեղծել ներառական առաջատար թիմեր՝ կազմված ուսուցիչներից, ծնողներից և աշակերտներից:

4.1 Համակարգի վերլուծության և կատարելագործման գործընթացը պետք է լինի շարունակական:
4.2 Տնօրինության ակտիվ մասնակցությունը ներառականությանը վերաբերող միջոցառումներին, օրինակ՝« Բուլլինգի դրսևորման ձևերը) դպրոցներում:
4.3 Շարունակել կրթել աշակերտներին, ծնողներին և ուսուցիչներին նոր մեթոդներով և ձևերով:
4.4 Ձևավորել թիմ, որը պատասխանատու կլինի փոփոխություններն իրականացնելու համար:

21.ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ներդպրոցական վերահսկողությունը աշխատակազմի, այդ թվում ուսուցչի աշխատանքի արդյունքների, դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի վերլուծությունն է: Ներդպրոցական վերահսկողությունը մանկավարժական, հոգեբանական, դիդակտիկ, կազմակերպչական և ստեղծագործական գործընթաց է, որն ունի ամենօրյա կատարելագործման կարիք[4]:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
1. Հաստատության զարգացման ծրագրի տեսլականից բխող ՈՒԴԱՏ ռազմավարական պլանավորում: 2. ՈՒԴԱ արդյունավետ կառավարում ՏՀՏ ինտեգրմամբ: 3. Կազմվում են օրվա պլանները, կատարվում փոխադարձ դասալսումներ: 4. Գործող խորհուրդները, մասնախմբերը պարբերաբար հրավիրում են նիստեր, կազմվում են տարեկան աշխատանքային պլաններ և յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ներկայացվում են հաշվետվություններ: 5. Էլեկտրոնային դասամատյաններում պարտաճանաչ գրանցումներ են կատարվում:	1.Թեմատիկ և օրվա պլանները չեն կազմվում պատշաճ, պահանջներին համապատասխան: 2. ՈՒԴԱ կազմակերպվում է ոչ մշտական վերահսկողությամբ:

[4] «Ներդպրոցական վերահսկողության ձևերը» ԿԶՆԱԿ հիմնադրամ, Արտաշես Թորոսյան

Նպատակ 12



Գործողություններ

1.1Վերահսկել էլեկտրոնային մատյանների հետ աշխատանքը:
1.2 Վերահսկել առարկայական մասնախմբերի աշխատանքային պլանների պատշաճ և ժամանակին կատարումը;
1.3 Վերահսկել դասղեկների տարեկան աշխատանքային պլանները:
1.4 Վերահսկել ուսուցիչների աշխատանքային պլանները, տնօրենի տեղակալի աշխատանքային պլանները:
1.5 Վերահսկողության համար ընտրել աշխատանքային խումբ և բաշխել աշխատանքը
1.6 յուրաքանչյուր խմբի անդամի միջև:
1.7 Քննարկել վերահսկողության արդյունքներն և հրավիրել արտահերթ մանկավարժական խորհրդի նիստ:
2.1 Ծանոթանալ ուսուցչի մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթերին, ուսումնական ծրագրերին, օրինակ՝ թեմատիկ պլաններին, դասերի պլաններին, դասամատյաններին:
2.2 Կատարել դասավանդող առարկայի արդյունքների մշտական վերահսկում:
2.3 Կատարել առարկայական ծրագրերի կատարողականի պարբերական ստուգում:
2.4 Կատարել ուսուցչի աշխատանքի մշտադիտարկում:
3. 1Առանձին առարկաներից ձեռք բերված գիտելիքների արդյունքները ամփոփելու նպատակով անցկացնել ստուգարքներ:
3.2 Ուսումնասիրել աշակերտների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում:
3.3 Ուսումնասիրել բարոյահոգեբանական մթնոլորտը դասարաններում:
3.4 Ուսումնասիրել աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը:
3.5 Ուսումնասիրել ուսման նկատմամբ վերաբերմունքը:
3. 6 Վերահսկողության արդյունքում հայտնաբերված խնդիրների լուծման համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:
3.7 Բոլոր աշխատանքներում լինել հետևողական:

Դպրոցի հիմնախնդիրները

1.Աշակերտների անվտանգության պատշաճ պահպանում:

2. Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի թերացում:

3.Ընտանիք-դպրոց թույլ համագործակցություն:

4.Մանկավարժական համակազմի պատրաստականություն:

22. Դպրոցի հիմնախնդիրների լուծումը

Դպրոցում աշակերտների առողջության պահպանմանը ուղղված քայլերը.

1. Մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿ ունեցող երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրները:
2. Մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել համայնքային բժշկական հաստատության հետ:
3. Հնարավորինս բացառել անորակ սննդի մուտքը դպրոց:
4. Կազմակերպել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ:
5. Պաստառների, միջոցառումների, իրազեկման միջոցով պարբերաբար անդրադառնալ վտանգավոր սովորույթներին (ալկոհոլ, ծխախոտ, թմրանյութեր):
6. Ուշադրություն դարձնել կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սովորողներին, ինչպես նաև ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման ենթարկված երեխաներին հայտնաբերել և տրամադրել հոգեբանական աջակցություն:
7. ՆԶՊ ուսուցչի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի(ԴԱԿ)-ի, դասղեկների հետ հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուսումնական տագնապ, տարհանում,աղետներից պաշտպանվելու՝ երեխաների կարողությունների ձևավորմանը:
8. Դպրոցի շրջանակներում ստեղծել բաց տեղեկատվական կրթական տարածք ծնողների իրազեկման միջոցառումները իրականացնելու նպատակով:
9. Ապահովել անվտանգ միջավայր երեխայի զարգացման համար[5]:

[5] ՀՀ Ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատման չափանիշները,

23. ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Դպրոցի ուսումնական գործընթացին զուգահեռ իրականացվում է դաստիարակչական աշխատանք: Այս գործում կարևոր դեր ունեն և՛ ուսուցիչները, և՛ ծնողները:

Դաստիարակչական համակարգի նպատակն է.

1. Սովորողների մոտ ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների ապահովում:
2. Սովորողի մոտ ստեղծագործական ու նորարար մոտեցումների ձևավորում:
3. Ձևավորել հարգանք, ազնվություն և պատասխանատվություն:
4. Հոգևոր և նյութական ժառանգության ու մշակույթի արժևորում:
5. Յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ:
6. Օգնել սովորողին առանց սթրեսի հարմարվել աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին:

Դաստիարակչական համակարգի կատարելագործման աշխատանքները արդյունավետ կլինեն, եթե ծնողները ակտիվ համագործակցեն դպրոցի հետ:

Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է.

1. Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում:
2. Տեղեկատվության տարածման միջոցով՝ ծնողական, կառավարման և մանկավարժական խորհուրդների կապի ամրապնդում:
3. Մշտադիտարկումների միջոցով բացահայտել առկա խնդիրներն ու բացթողումները և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:
4. Ամրապնդել համագործակցությունը Շիրակի ՏՄԱԿ-ի հետ, որի գործունեության արդյունքում կբարելավվեն մանկավարժ-ԿԱՊԿՈՒ աշակերտ փոխհարաբերությունը, ինչպես նաև իրականացնել միջոցառումներ դժվար դաստիարակվող երեխաների հետ:
5. Դպրոցի խորհրդի հետ իրականացնել ռազմահայրենասիրական դաստիարակության համար միջոցառումներ, ձևավորել դպրոցական ավանդույթներ:
6. Դպրոցում ձևավորել համապատասխան բարոյահոգեբանական մթնոլորտ ուսումնական գործընթացի մասնակիցների շրջանում:
7. Ապահովել կրթական կարիքները բավարարող պայմաններ՝ նպաստելով աշակերտների ստեղծարար, մշակութային, հոգևոր, բարոյական և ֆիզկական զարգացմանը:
8. Կիրառել կարգապահական կանոնները, այդ թվում՝ վարքականոններ և վերահսկողություն:

24. ԸՆՏԱՆԻՔ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ամենօրյա աշխատանքի արդյունքում անհրաժեշտ է ձեռք բերել փոխադարձ վստահություն: Այս համագործակցության բարելավումը նպատակ ունի.

1. Ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման գործընթացին:
2. Բարձրացնել ընտանիք –դպրոց փոխադարձ վստահության մակարդակը:
3. Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ:

Դրա համար անհրաժեշտ է ճշտել.

1. Սոցիալապես անապահով աշակերտների թիվը:
2. Միակողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը:
3. Երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը:
4. Պատերազմում զոհված ծնողներ ունեցող աշակերտների թիվը:
5. Հաշմանդամ ծնողներ ունեցող աշակերտների թիվը:
6. Ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը:
7. Միայնակ մոր խնամքի տակ գտնվող աշակերտների թիվը:
8. Վարձու աշխատանք կատարող սովորողների թիվը:
9. Այն աշակերտների թիվը, որոնց ծնողները գտնվում են արտերկրում:

Կատարված վերլուծության արդյունքում պարզվեց Գյումրու թիվ30հիմնական դպրոցում աշակերտների սոցիալական կարգավիճակը.

	Աշակերտների թիվը	Տոկոսային հարաբերությունը
Լիարժեք ընտանիք ունեցող երեխաներ	165	98,2%
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	3	1,8%
Անապահով ընտանիքի երեխամեր	42	25%
Ծնողազուրկ երեխաներ	-	-

Ընտանիք-դպրոց համագործակցությունը բարելավելու համար անհրաժեշտ է՝

1. 1.Կազմակերպել տունայցեր, ընտանիքի առկա վիճակի մասին տեղեկություններ հավաքել:
2. 2.Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար համապատասխան մասնագետների կողմից:
3. Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ:
4. Ամրապնդել ընտանիք-դպրոց վստահությունը:
5. Աջակցել ծնողազուրկ և սոցիալապես անպահով ընտանիքների սովորողներին:
6. Շահագրգռել ծնողներին օգտվել կրթական կայքերից, մասնավորապես՝ http://www.ktak.am, http://www.armedu, http://wwwlib.armedu.am :

25.ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՀԵՏ

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

1. Պայմաններ ստեղծել մանկավարժական համակազմի մեթոդական պատրաստվածության ամենօրյա կատարելագործման համար:
2. Ոգևորել մանկավարժներին՝ ներկայացնելու իրենց մեթոդական աշխատանքների նյութերը, կատարել հետազոտական աշխատանքներ:
3. Ձևավորել մասնագիտական խմբեր կամավոր ատեստավորմանը նախապատրաստելու համար:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի որակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է.

1. Լայնորեն կիրառել դասաժամի արդյունավետությունը բարձրացնող միջոցներ՝ ուսումնադիդակտիկ պարագաներ, սլայդներ, տեսաժապավեններ, պաստառներ, նյութեր:
2. Պարբերաբար կազմակերպել կոնֆերանսներ, վերապատրաստումներ, բաց դասեր:
3. Իրականացնել փորձի փոխանակում դասալսումների միջոցով:
4. Մշտադիտարկել մեթոդմիավորման աշխատանքները:
5. Բարձրացնել աշխատանքային կարգապահությունը հետևողականության միջոցով:
6. Խրախուսել մանկավարժներին մասնակցելու միջազգային ծրագրերի, օրինակ՝ «Իթվինինգ», ինչպես նաև ԿԳՄՍ-ի կողմից կազմակերպված «Տարվա լավագույն ուսուցիչ», մրցույթին, հրատարակել մեթոդական հոդվածներ:

26.ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄԸ

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011թ. մայիսի 17 N571-Ն հրամանի Հայաստանի Հանրապետության Հանրակրթական Ուսումնական Հաստատության ՊՈԱԿ-ի կանոնադրության համաձայն գործում է աշակերտական խորհուրդը: Աշխորհրդի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը:

Սովորողների ինքնավարության ու ինքնակառավարման նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը, խորհրդի անդամներին մասնակից դարձնել դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, թույլ տալ ազատ արտահայտել իրենց կարծիքը:

Այդ նպատակով անհրաժեշտ է.

1. Ձևավորել նոր ավանդույթներ:
1. Ստեղծել պայմաններ աշակերտների իքնադրսևորման, ազատ կարծիքի արտահայտման համար:
2. Ապահովել աշակերտների ինքնակրթությունը աշակերտական ինքնավարության միջոցով:
3. Նպաստել աշակերտի համակողմանի զարգացմանը և դպրոցի դերի բարձրացմանը:

27. ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առկա հիմնախնդիրները	Հիմնախնդիրների լուծման գործողությունները	Պատասխանատուներ	Կատարման ժամանակացույց	Ֆինանսական ծախսերը
Աշակերտների թվի նվազում	1.Կիրառել անհատականացված ուսուցում 2.Գնահատել սովորողների կարիքներն ու հետաքրքրությունները 3. Դարձնել ուսուցման գործընթացը ավելի գվարճալի և արդյունավետ 4.Պարբերաբար գնահատել սովորողների առաջընթացը	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մանկավարժներ	2023-2028թթ.	Պետական բյուջե, դրամաշնորհա-յին ծրագիր
Մանկավարժական համակազմի բարելավում	1.Առաջնորդվել առարկայական չափորոշիչով, ծանոթանալ գնահատման մեթոդաբանությանը 2. Մոտիվացնել ուսուցիչներին՝ մասնակցելու կամավոր ատեստացիային 3.Ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանի հասնելու համար	Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ	2023-2028թթ.	
Շրջանավարտների խորհրդի ստեղծում	Ծնողների և համայնքի ներկայացուցիչների հետ կազմակերպել խորհրդակցություններ	Տնօրեն, շրջանավարտ-ներ, համայնքի ներկայացուցիչ-ներ	2023-2024թթ.	Ներդրումներ, ֆինանսական այլ միջոցներ
Նյութատեխնիկա կան բազայի հարստացում	1. Համակարգչային կաբինետը համալրել նոր տեխնիկաներով 2. Ձեռք բերել լաբորատոր սարքավորումներ	Տնօրեն, համակարգող	2023-2028թթ.	Արտաբյուջետա-յին միջոցներ

Խորհրդակցական մարմինների և կառավարման դերի բարձրացում	Ամրապնդել համագործակցությունը կառավարման մարմինների և խորհրդակցական մարմինների հետ	Տնօրեն, կառավարման խորհուրդ, խորհրդակցա-կան մարմիններ	2023-2028թթ.	
Ուսումնական հաստատությու-նում աուդիոդասարան-ների, օտար լեզուների ուսուցման խմբակի բացակայություն	1.Կազմել նախահաշիվ 2.Վերանորոգել տարածքը 3.Ձեռք բերել գույք 4.Ստեղծել խմբակներ	Տնօրեն, համակարգող	2023-2028թթ.	Արտաբյուջետա-յին միջոցներ
Նորարար գրադարանի ստեղծում	1.Կազմել նախահաշիվ 2.Վերանորոգել տարածքը 3..Ձեռք բերել գույք	Տնօրեն, համակարգող	2023-2028թթ.	Արտաբյուջետա-յին միջոցներ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, « ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերվող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 08.06 2020թ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը» N 26 Ն հրամանով հաստատված հավելվածում ներառված փաստաթղթերն են՝

- Էլեկտրոնային դասամատյաններ:
- Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ:
- Սովորողի անձնական էլեկտրոնային գործ:
- Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան:
- Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան:
- Ավարտական պետական, ավարտական փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ:
- Էլեկտրոնային հաստիքացուցակ:
- Տարիֆիկացիոն մատյան:
- Դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ:
- Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան:
- Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով:
- Ներքին և արտաքին գնահատում:
- Հաշվետվություններ:

28. ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռիսկերը ցանկացած նպատակադրման իրականացումը խոչընդոտող հնարավոր անցանկալի գործոններն են: Դպրոցի զարգացման ծրագրում հնարավոր ռիսկերի պլանավորումը կարևոր է, քանի, որ առանց ռիսկերի հաշվառման նույնիսկ ամենալավ մշակված զարգացման ծրագիրը դժվար է իրականացնել, և հնարավոր է չարձանագրվի ակնկալվող արդյունքը:

Ոլորտը՝ Շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Նպատակը	Խնդիրներ	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում:	1.Ապահովել անձնակազմի անվտանգությունը: 2.Տեղադրել տեսախցիկներ: 3.Հարստացնել նյութատեխնիկական բազան:	1.Անբավարար ֆինանսական միջոցներ: 2.Աշակերտների թվի նվազում:	1.Ձեռք բերել արտաբյուջետային միջոցներ: 2.Շահել դրամաշնորհային ծրագրեր: 3.Ստեղծել աջակցող և ապահով միջավայր:

Ոլորտը՝ Աշխատակազմ և մանկավարժական համակազմ

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
1.Հանրակրթական պետական ծրագրերի արդյունավետ կազմակերպում: 2.Աշխատակազմի ինքնակրթության զարգացման ապահովում:	1.Մանկավարժական համակազմի կարողունակությունների զարգացում: 2. Արժևորել, խրախուսել, վերապատրաստել աշխատակազմին: 3. Նվազագույնի հասցնել ուսուցիչների, սովորողների վրա մեդիայի բացասական ազդեցությունները, որոնք առաջանում են ապատեղեկատվության, սխալ, թերի տեղեկատվության հետևանքով:	Հաստատության ֆինանսական և մարդկային անբավարար ռեսուրսներ:	1.Կազմակերպել առցանց և առկա վերապատրաստումներ, սեմինարներ, կոնֆերանսներ: 2.Նոր կադրերի ընդգրկում աշխատակազմի մեջ: 3. Ֆինանսական այլընտրանքային միջոցների որոնում: 4.Համագործակցությունը «ԿԶՆԱԿ» հիմնադրամի հետ:

Ոլորտը՝ Աշակերտական համակազմ

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Սովորողների կրթության կառուցվածքի և բովանդակության վերազինում:	1.Սովորողների մոտ կարողունակությունների զարգացում: 2.Սովորողների ուսուցում և զարգացում ՀՊՉ-ին համապատասխան: 3.Սովորողի համապատասխան կրթական կարիքի բավարարում:	Մոտիվացիայի նվազում:	1.Հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները: 2.Տրամադրել աջակցություն և կազմակերպել լրացուցիչ անվճար դասեր: 3.Ուսումնական գործընթացում ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ:

Ոլորտը՝ Ուսումնական միջավայր

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Ուսումնական միջավայրի արդիականացում:	1.Նորարար գրադարանի ստեղծում: 2.Նյութատեխնիկական բազայի ստեղծում: 3.Լաբորատորիաների ստեղծում/քիմիայի, ֆիզիկայի/:	1.Ոչ բավարար ֆինանսական միջոցներ: 2.Ներդրումներ:	1.Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար: 2.Արդյունավետ կառավարել ֆինանսական միջոցները:

Ոլորտը՝ Կառավարման խորհուրդ և խորհրդակցական մարմիններ

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Կառավարման և խորհրդակացական մարմնի դերի բարձրացում:	1.Գործնականում կիրառել մանկխորհրդի լիազորությունները: 2.Ակտիվացնել աշխորհրդի գործունեությունը: 3.Ստեղծել շրջանավարտների խորհուրդ: 4.Ձևավորել սերտ համագործակցություն ԾԽ-ի հետ:	Իրազեկվածության մոտիվացիայի պակաս:	1.Իրազեկման մակարդակի բարձրացում: 2.Հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմի ներդնում: 3.Միջոցառումների, հանդիպումների կազմակերպում:

Ոլորտը՝ Համագործակցություն

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Սովորողների համար սոցիալական միջավայրի ապահովում:	1.Համագործակցել կրթական հաստատությունների հետ: 2.Համագորրծակցել հասարակական կազմակերպությունների հետ: 3.Ձևավորել ակտիվ քաղաքացի:	Չստացված համագործակցություն:	1.Համագործակցության մեխանիզմների մշակում: 2.Պլանավորել և կազմակերպել կանոնավոր հանդիպումներ իրազեկելու նպատակով: 3.Նախապես իրականացնել խարհրդակցություններ համապատասխան մասնագետների հետ:

Ոլորտը՝ Ներդպրոցական վերահսկողություն

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին ամբողջական տեղեկատվություն:	1.Կատարել մշտական վերահսկողություն դպրոցի բոլոր պլանների կատարման ուղղությամբ: 2.Վերահսկել մանկավարժների աշխատանքը և սովորողների գիտելիքների յուրացումը:	Պատրաստված վարչական և մանկավարժական մասնագետների պակաս:	Ծանոթացնել ուսուցիչներին իրենց մասնագիտական պարտականությունները նկարագրող փաստաթղթերին:

Ոլորտը՝ Տեխնոլոգիաներ, նորարարություններ

Նպատակ	Խնդիր	Ռիսկ	Ռիսկի ազդեցության նվազմանն ուղղված գործողություն
Նորարարություններ դասավանդման գործընթացում:	Մանկավարժամեթոդական գործընթացում ներդնել ՏՀՏ գործիքներ:	1.Ոչ բավարար ֆինանսական միջոցներ: 2.Ուսուցիչների պասսիվություն: 3.Նորամուծությունների մերժում:	1.Ուսումնական նյութերի ապահովում: 2.Ուսուցիչների մոտիվացում: 3.Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում: 3.Մասնագիտական մակարդակի պատրաստվածության բարձրացում:

27. ա. Զարգացման ծրագրի իրականացման գործընթացի համար անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները

- Դիտակտիկ պարագաներ
- Ժամանակակից սարքավորումներ՝ համապատասխան լուսավորություն
- Դպրոցի ուսումնաարտադրական ձեռնարկատիրություն

բ.Ծրագրի բյուջեն

Դպրոցի զարգացման ծրագիրը ենթադրում է որոշակի ֆինանսական ծախսեր: Դպրոցի ֆինանսավորումը, որպես կանոն, շատ սահմանափակ է և բավականացնում է հիմնականում աշխատավարձի, հարկերի, կոմունալ, գրենական պիտույքների, գույքի և սարքավորումների ձեռք բերման, կապի ծառայությունների, էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման, ջրմուղ-կոյուղու ծառայությունների ծախսերի վճարմանը:

Տարիներ շարունակ դպրոցը չի թարմացրել իր գույքը, այն վերանորոգել է շատ սահմանափակ ձևով բավարար միջոցներ չլինելու պատճառով: Արդյունքում նախատեսվում է 2023-2028թթ, ըստ անհրաժեշտության իրականացնել վերանորոգման աշխատանքներ: Դպրոցի շենքային պայմանները հարմարեցված չեն ներառական կրթությանը, ինչը լուրջ խոչընդոտ է: Նախատեսվում է ներդնել պետության կողմից ֆինանսավորման նոր մոդել, որի շնորհիվ հնարավոր կդառնա լուծել մատչելիության խնդիրը առաջիկա 3 տարիների ընթացքում:

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են հիմնականում ՀՀ պետական բյուջեից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից[6]:

Ֆինանսական միջոցների աղության դեպքում հնարավոր է գտնել այլ ուղիներ.

- վերապատրաստումներ իրականացնելու պատասխանատվությունը տնօրենը կարող է իր վրա վերցնել:
- Գտնել դպրոցում մասնագետներ, ովքեր կարող են ինքնուրույն ուսումնասիրել և այնուհետև կամավորական հիմունքներով վերապատրաստել իրենց գործընկերներին:
- Դիմել ԿԶՆԱԿ-ի աջակցությանը:
- Դիմել տարբեր բարեգործներին օժանդակություն ստանալու համար:
- Կազմել ծրագրեր դրամաշնորհներ շահելու նպատակով:

Դպրոցի զարգացման ծրագրի ֆինանսավորման հիմնական աղբյուրը ՀՀ պետբյուջեն է, իսկ լրացուցիչ աղբյուրներն են.

- Արտաբյուջետային միջոցները
- Բարեգործական նպատակային, շրջանավարտների. ծնողների, քաղաքացիների ներդրումները

[6] ՀՀ ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն, 2002թվականի հուլիսի25-ի N 1392-Ն որոշում, 7-րդ դրույթ

Դպրոցը նաև կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում ներքոնշյալ դեպքերում.

- Արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով:
- Ուսումնամեթոդական գիտափորձ և /կամ/ այլընտրանքային ծրագիր իրականացնելու նպատակով:
- Դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ կազմակերպելու նպատակով:

Ֆինանսական լրացուցիչ աղբյուր կարող է հանդիսանալ նաև դպրոցում իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արտադրանքի իրացումը:

29. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Զարգացման ծրագրում նախատեսված գործողությունների բարեհաջող իրականացման արդյունքում ակնկալվում է, որ

1. դպրոցը կթևակոխի զարգացման նոր փուլ՝ նորարարական ՏՀՏ գործիքակազմի և մեթոդների յուրացման, ինչպես նաև դասապրոցեսում դրանց կիրառման շնորհիվ,
2. ուսուցիչները կմասնակցեն համապատասխան վերապատրաստումների՝ տիրապետելու թե իրենց առարկայական նորարար մեթոդներին ու նորամուծություններին, և թե դասապրոցեսի անցկացման, աշակերտների գնահատման նոր համակարգին,
3. ներդպրոցական, արտադպրոցական և միջազգային կոնֆերանսներին, ֆորումներին, սեմինարներին և վեբինարներին ուսուցիչների մասնակցության, համապատասխան գիտելիքների և նոր կարողությունների ձեռքբերման շնորհիվ որակապես կբարելավվի ԲՏՃՄ առարկաների և լեզուների ուսուցումը,
4. կբարելավվի ուսուցիչների մասնագիտական որակը, աշխատակազմում կընդգրկվեն նոր, եռանդուն և երիտասարդ կադրեր,
5. դպրոցը կունենա ժամանակի պահանջներին համապատասխան նյութատեխնիկական հագեցած բազա, համապատասխան նյութերով և սարքավորումներով հագեցած լաբորատորիաներ, ինչպես նաև նորարար գրադարան, ընթերցասիրության մակարդակը և ընթերցողների քանակը բարձրացնելու նպատակով,
6. յուրաքանչյուր սովորող հնարավորություն կունենա ստանալ որակյալ կրթություն, բարձրացնել առաջադիմությունը, գրանցել բարձր ցուցանիշներ առարկայական օլիմպիադաներում: Բացի այդ սովորողներին հնարավորություն կընձեռվի մասնակցել միջազգային տարաբնույթ ծրագրերի և՛ օֆլայն, և՛ օնլայն հարթակներում, իսկ դպրոցը ավարտելուց հետո ընտրել մասնագիտական ճիշտ ուղի,
7. դպրոցը կդառնա սոցիալ-մշակութային կենտրոն, կզարգանա դպրոց-ընտանիք, դպրոց-համայնք կապը,
8. կակտիվանա համագործակցությունը կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև, կձևավորվի շրջանավարտների ու հոգաբարձուների խորհուրդ, իսկ ԱԽ և ԾԽ գործունեություն կծավալեն ժողովրդավարական սկզբունքերին համապատասխան,
9. դպրոցը աչքի կընկնի բարձր կարգապահությամբ և կրթության որակի բարձրացմամբ, որը կարող է նպաստել աշակերտների թվի աճին,
10. կստեղծվի բարենպաստ աշխատանքային և սովորելու միջավայր, ուր թե աշխատողները, և թե սովորողները կհաճախեն սիրով և ոգևորվածությամբ:

30.ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գործողության առանձնահատկություններից բխող գնահատման չափանիշները

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության միասնականությունը ապահովելու, հանրակրթության որակը բարելավելու և արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր գործառույթ է արդյունքների գնահատումը[7]:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական, որի չափանիշները և իրականացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակցում են վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները, ծնողական և աշակերտական, ինչպես նաև այլ գործող խորհուրդները: Կրթական ծառայությունների որակի գնահատման հիմքը ուսումնական հաստատությունների միջին վիճակագրական տվյալների ցուցանիշներն են:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշ	գերազանց	լավ	բավարար	անբավ
1.Դասասենյակների հարդարումը կահավորումը:			✓	
2.Կաբինետների հարդարումը և կահավորանքը, ուսումնական նյութերի առկայությունը:				✓
3.Սպորտդահլիճի հարդարումը և կահավորանքը:		✓		
4.Ռազմագիտության կաբինետի հարդարումը և կահավորումը:		✓		
5.Գրադարանի հարդարումը և կահավորումը, անհրաժեշտ գրակ. և ՏՀՏ միջոցներ առկայությունը:				✓
6.Բուժկետի հարդարումը և կահավորումը, սարքավորումների առկայությունը:		✓		

[7] ՀՀ Հանրակրթության ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները, https://www.arlis.am/documentview.aspx?docid=93577,դրոյթ3.12

7.Բակի խնամվածությունը:		✓		

2.Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշները

Կրթության որակն՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Նպատակը՝ Կրթության բովանդակության վերազինում

Գործողությունները

- Սովորողներին տալ տեղեկատվություն առողջության մասին:
- Պարբերաբար անցկացնել ուսուցողական տագնապներ և տարհանումներ:
- Ապահովել պայմաններ սովորողների ֆիզիկական առողջության համար:
- Սովորողների մոտ ձևավորել կարողունակություններ:
- Սովորողներին ներկայացնել ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքները և գնահատման ձևերը:
- Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման դասընթացներ:

  Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ/կիսամյակային/ և տարեկան գնահատումը, դրանց ձևերի, մեթոդների, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է ուսումնական հաստատությունը՝ հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան: Գյումրու N 30 հիմնական դպրոցը իրականացրել է ուսումնադաստիարակչական ծրագրեր՝ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և այլ հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելման համար:

  Ուսումնական հաստատությունն ապահովում է սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը.

Գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշ:	գերազանց	լավ	բավարար	անբավ.
1.Սովորողների միջին տարեկան գնահատականները՝ ըստ կրթական աստիճանների:			✓	
2. Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների:				✓
3.Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների:		✓		
4.Ավարտման գործակիցը՝ ըստ կրթական աստիճանների:		✓		
5.Երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների:			✓	

6. Հետ մնացող աշակերտների թիվը:				✓
7.Աշակերտների ընդգրկվածությունը արտադասարանական խմբակներում/երաժշտական, սպորտային/:	✓			
8.Աշակերտների բացակայությունները:			✓	
9.Աշակերտների մասնակցությունը օլիմպիադաներին / համայնքային, մարզային, հանրապետական/ :				✓
10.Ներառական կրթության ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը:			✓	
11.Ուսումնադաստիարակչական ծրագրեր՝ալկոհոլի,ծխախոտի, թմրամիջոցների և այլ հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելման համար:			✓	

3.Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշները

«Գյումրու N 30 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում կատարված մշտադիտարկման արդյունքում պարզվեց, որ դպրոցը ունի ԿԱՊԿՈՒ 5 աշակերտ: Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված ուսուցիչներ: ՈՒՀ-ն ունի ԿԱՊԿ ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ՝ ուսուցչի օգնական, սոցիալական մանկավարժ, հոգեբան: ԿԱՊԿ ունեցող սովորողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով և այլ պարագաներով: Շենքը մուտքի մոտ ունի թեքահարթակներ:

Դասասենյակների դասավորությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող սովորողները մեկուսացված չեն: ՈՒՀ ունի ռեսուրս-սենյակ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք:

Դասի պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի առարկայական ծրագրերի:

Դպրոցի երկրորդ հարկում հարմարեցումները բացակայում են:

Աշխորհրդի հանդիպումից պարզ դարձավ, որ ՈՒՀ սովորողների մոտ ձևավորված է հանդուրժողականություն, կարծրատիպերի վերացում ԿԱՊԿ ունեցող ընկերների նկատմամբ: ՈՒՀ իրականացնում է զրույցներ, քննարկումներ՝ ներառական կրթությանը առնչվող:

Գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշ	գերազանց	լավ	բավարար	անբավ.
1.Ներառական կրթության թեմաներով վերապատրաստված ուսուցիչներ:			✓	
2.Համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:				✓
3.Հանդիպումների կազմակերպում և անահատական խորհրդատվություն աշակերտների ծնողների հետ:				✓
4.Ձեռնարկում են սովորողներին սոցիալական և հոգեբանական աջակցության տրամադրում:			✓	
5. Ապահովում են ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ		✓		
6.Տարածքը սպասարկող խնամակալության և հոգաբարձության մարմինը հայտնաբերում և ընտանիքին տեղեկացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի մասին:				✓
7.Մանկավարժների փորձառությունը սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման մեջ:			✓	
8. ԿԱՊԿՈՒ սովորողի համար անհատական ուսուցման պլանի կազմման հմտությունը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների որակը:		✓		
9.Մասնակցությունը ներառական կրթության կազմակերպած ծրագրերին:		✓		
10.Դասասենյակների դասավորությունը հարմարեցված է ԿԱՊԿՈՒ սովորողներին:			✓	
11.Ռեսուրս-սենյակի ձևավորում՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների համար:	✓			
12.Ուսուցիչները ունեն հավասար վերաբերմունք:	✓			

4.*Աշխատակազմի արժեքման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշները*

Նպատակը՝ Հանրակրթական պետական ծրագրերի արդյունավետ կազմակերպումը

Գործողությունները՝

1. Ուսումնական նախագծերի իրականացում:
2. Մանկավարժական համակազմի կարողունակությունների գնահատում:
3. Ուսուցիչներին մասնակից դարձնել ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպվող դասընթացներին:
4. Կազմակերպել պարբերաբար գործող սեմինար պարապունքներ, որտեղ փորձառու ուսուցիչները կիրականացնեն փորձի փոխանակում:
5. Տնօրինության կողմից կազմակերպել դասալսումներ, արդյունքները քննարկել մեթոդմիավորումների նիստերում:
6. Համակարգչային բավարար գրագիտություն չունեցող ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստումներ:
7. Կազմակերպել ինֆորմատիկայի և այլ առարկաների ուսուցիչների կողմից համատեղ վարվող դասեր:
8. Կազմակերպել վարպետության դասեր:
9. Աջակցել ուսուցիչներին՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքները:
10. Հարստացնել գրադարանը հանրակրթությանը վերաբերող բրոշյուրներով, ՀՀ օրենքներով, մեթոդական ձեռնարկներով, պաստառներով:
11. Ուսումնասիրել ՀՊՉ-ն և դրանից բխող առարկայական ծրագրերը, մեթոդական փոփոխությունները:
12. Ապահովել պայմաններ ուսուցիչների շարունակական ուսուցումն ու զարգացումը ապահովելու համար:
13. Զարգացնել ռուսաց լեզվի ուսուցումը:
14. Իրականացնել ուսումնական նախագծեր:

Գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշ	գերազանց	լավ	բավարար	անբավ.
1. ՀՊՉ-ին համապատասխան սովորողների ուսուցումն ու դաստիարակության պլանավորման և իրականացման կարողությունը:				✓
2.Առարկայի թեմատիկ պլանի կազմումը ՀՊՉ-ին համապատասխան:				✓
3.Բաց դասի թեմաների մշակում:	✓			
4.Առարկայական միջոցառումների մշակում:	✓			
5.Գնահատման սկզբունքների ներկայացնումը աշակերտներին:				✓

6.Մշակում են մեթոդական զեկուցումներ/սեմինարներ մ/մ ուսուցիչների համար/			✓	
7.Կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից, դասավանդման արդյունավետ մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը:				✓
8.Ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը, դիտարկումը, գնահատումը:			✓	
9.Հայրենասիրության դաստիարակում:	✓			
10.Ուսուցչի ձեռքբերումների պարգևատրում:			✓	
11.Պատշաճ վարքագիծ և վարվելակերպի ձևավորումը:		✓		

5.*Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության, արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշները*

Նպատակը՝ Սովորողների սոցիալական հմտությունների զարգացումը

Գործողությունները.

- Մասնակցել հանդիպումների արվեստագետների, արվեստի գործիչների հետ:
- Կազմակերպել այցելություններ մշակույթի կենտրոններ, թանգարաններ, էքսկուսիաներ, ՀՀ պատմամշակութային վայրեր:
- Դաստիարակել հայրենասեր, ստեղծագործող, նախաձեռնող կարողունակ քաղաքացի:
- Կազմակերպել երկարօրյա ուսուցում:

Գնահատման ռուբրիկ

	Գնահատման չափանիշ	գեր ազ.	լավ	բավ.	անբավ.
1.	Սովորողների հետ իրականացվում են արտադասարանական աշխատանքների կազմակերպման աշխատանքներ:			✓	
2.	2023-2024 ուստարում կազմակերպվելու են ուսումնական խմբակներ, երկարօրյա խմբեր:				✓
3.	Առանձնացվում են ուսումնական կաբինետներ:				✓
4.	Ստեղծվում են մասնագիտական կողմնորոշման կենտրոններ:				✓
5.	Սովորողները համագործակցում են «Նոր լույս», «Հույսի կամուրջ» , «Կարիտաս» ԲՀԿ-ի հետ «Ներառական կրթությունը դպրոցում» թեմայով:	✓			
6.	Համագործակցում են ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ այլ մարզերի կրթական հաստատությունների հետ:				✓
7.	Ծնողները մասնակցում են սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին:			✓	
8.	Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:				✓
9.	Աշխորհուրդը բանավիճում է համարձակորեն , արտահայտում իր կարծիքը, համադրում այլոց տեսակետների հետ, որը նպաստում է նաև այլ դպրոցների հետ համագործակցության ամրապնդմանը:			✓	
10.	Ծնողները մասնակցում են սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում են դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով նաև հովանավորների:				✓

6. Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշները

Նպատակը՝ Բուլլինգի դրսևորումների բացահայտումը և կանխարգելման ուղիները դպրոցում

Գործողությունները

- Ապահովել անվտանգ կրթական միջավայր:
- Գտնել ուղիներ կանխարգելելու բուլլինգի դրսևորումները :
- Դադարեցնել անձի ագրեսիվ վարքագիծը՝ հրել, հարվածել, պիտակավորել, սպառնալ, նկարներ տարածել և այլն:
- Իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ:

Բուլլինգի ենթարկվելու ռիսկային գոտում գտնվում են ԿԱՊԿ ունեցող երեխաները, ֆիզիկական կառուցվածքային խնդիրներ ունեցող երեխաները: Դպրոցում աշխատանքները պետք է կրեն շարունակական բնույթ:

Գնահատման ռուբրիկ

	Գնահատման չափանիշը	գերազանց	լավ	բավար.	անբավ.
1.	Իրավիճակի վերահսկողություն և մշտադիտարկում, որի արդյունքում հստակ դուրս են բերվում իրավիճակում ներգրավված երեխաները՝ զոհը, ագրեսորը, մասնակիցները, դիտորդները:			✓	
2.	Միասնական աշխատանքային պլանի կազմում :				✓
3.	Անհատական հանդիպումների իրականացում այն երեխայի հետ, ում հանդեպ որ կիրառվել է բուլլինգը:				✓
4.	Անհատական զրույցներ իրավիճակում ներկա գտնված բոլոր մյուս երեխաների հետ:			✓	
5.	Խորհրդատվական հանդիպումներ բոլոր ներգրավված երեխաների ծնողների հետ:			✓	
6.	Ներգրավված բոլոր երեխաների հուզական վիճակի մշտական դիտարկում դասարանում և դպրոցում:				✓
7.	Դասալսումներ, հոգեբանի աջակցություն:			✓	
8.	Դասարանների պատասխանատուների, առարկայական ուսուցիչների հետ մշտական քննարկումներ ու խորհրդատվական զրույցների իրականացնում:			✓	

31.Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները

ԴԶԾ իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Վերահսկողություն իրականացնող մարմիններն են՝ ԿԶՆԱԿ, ԳԹԿ, կոլեգիալ կառավարման մարմինը: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար[8]:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

- դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
- դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,
- համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,
- դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրինության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
- յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,
- յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,
- յուրաքանչյուր ուս տարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից:
- Թվարկված արդյունքները կնպաստեն դպրոցի վարկանիշային ցուցանիշի աճին՝ ապահովելով աշակերտների աճ:

Դպրոցի առաքելությունը և ծրագիրը ենթակա են փոփոխությունների ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին և արտաքին գործոնների օբյեկտիվ ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետ:

[8] Դպրոցի զարգացման ծրագիր, Ռ. Մուրադյան, Գ.Մելիքյան, Ա.Հովսեփյան, Կ.Մելքոնյան, Ա.Թորոսյան, Գ. Սաֆարյան: Երևան Տիգրան Մեծ, 2014

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման համար մատնանշի կատարման/ արկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշում
1	Մանկավարժական առաջավոր փորձի ներդրում պրակտիկ աշխատանքում	Դասի արդյունավետ կազմակերպում	2023-2028թթ.				
2	Սկսնակ ուսուցիչների վերապատրաստում, նախապատրաստում ատեստավորման	Ժամանակակից մեթոդների կիրառում	2023-2028թթ.				
3	Նյութատեխնիկական բազայի համալրում, նոր համակարգիչների ձեռքբերում	Դասերի համախմբում	2023-2028թթ.				
4	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի	Դպրոցի գործունեության հասանելիություն առցանց հարթակում	2023-2028թթ.				

	անցում էլեկտրոնային փաթեթի						
5	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Մշակութային ինտելեկտի զարգացում	2023-2028թթ.				
6	Դասատիարակչական աշխատանքներ հիմնված դասղեկական պլանների վրա	Դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացում	2023-2028թթ.				
7	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Դասապրոցեսին ավելի հեշտ ինտեգրում	Տարվա ընթացքում				
8	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Ավելի խոր և մանրամասն ծանոթություն հեղինակների կյանքի պայմաններին նրանց ստեղծագործություններին	2023-2028թթ.				
9	Ուսուցման դասատիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական	Ուսուցիչ-ծնող, ծնող-դպրոց կապի ամրապնդում,կրթության որակի բարձրացում	2023-2028թթ.				

	ժողովներ և հանդիպումներ ուսուցիչների հետ						

32. Եզրակացություն

2023-2028թթ զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է աշխատանքների իրականացումը: